

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Գ.—ԵՐՋԱՆ ԺԵ· 1882 ՏԱՐԻ ԺԴ· ՄԱՐՏ 31·

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ս· ՄԻՒՌՕՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ·

Վ. Հայրապետական Սրբազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց Տ· Տ· Գէորգ Դ· կամաւ-ղիւկոս իպէտս եկեղեցեաց Հայաստանեայց կամի Աստուծով Ս· Միւռոնի օրհնութիւն կատարել ի 16ն Մայիսի ներկայ 1882 թուականի ատ ի Մայր Աթոռոջս ի Ս· Էջ-միածին, որոյ վասն վուխտամբ ծանուցա-նել համայն Հայկազուն եղբարց մերոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն քաղաքի եւ հոգեւոր մեծ հանդէս:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ եւ փառաւոր խորհրդաւոր արարողութեանց մին եւ գլխաւորն է Ս. Միւռոնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշուշտ եմք՝ զի սիրելի Աղպայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեւանդն անճկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան եւ շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաեւ բազմադարեան շքեղափառ վկայից եւ պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Վայրացս եւ անգին եւ սրբազան հնութեանց ուխտի եւ այցելութեան պարտքը հատուցանելով՝ մխիթարվիլ հրճուանօք ըստ հոգւոյ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԿՈՉԴԱԿ

ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՊԱՇՏՕՆԻ ԵՒ ՊԱՐՏՈՒՑ ՀԱՄԱՌ.

Խնբագրութիւնս իւր իստանան համաձայն ահա հրատարակուժէ Աղգիս Վեհափառ Հայրապետի Ս. Սինոդին ուղղած պաշտաւնի Կոնդակը եւ Աւագ Քահանայից պարտուց եւ պաշտամանց վերաբերեալ Հրահանգները։

«Յօրէ գահակալութեան մերոյ տեսանելով զինչ
«ինչ պեղծմունս և զնօրամուտ սովորութիւնս ներ-
«մուծեալս յօտարաց յեկեղեցին մեր իբր ի միոյ գարէ
«նեւոէ՝ չանացաք զնորամուտսն բառնալ իսպառ, իսկ
«զնախնական և զազգային բարեկարգութիւնն խա-
«փանեալս զանդրէն վերանորոգել։ Մին ի բարեկարգու-
«թեանց եկեղեցւոյ է պաշտօն և պարտաւորութիւն
«Աւագ քահանայից, զորմէ յառաջ քան իբր զվեց
«ամ լսատ չեռևեալ Հրահանգաց կանոնաւորեալ եւ
«յանձնեալ էաք Գաբրիել Եպիսկոպոսի Ջյվա-
«զեան, յետ տալոյ նմա զառաջնորդականն պաշտօն
«վիճակին Աղբատանու և Խմբէթի՝ զործադրել
«զայնս ի նոյն վիճակին, և որչափ կարելին էր՝ յիւ-
«րումն կենդանութեան ի զործ եդ, բայց այժմ պատ-
«շաճ դատիմք առաջադրել Սինոդիդ և հրամայեմք
«հրամանագրել ոչ միայն Տփխեաց՝ այլ և ամենայն
«վիճակաց, ծեռնական Առենից և Հոգևոր կառավա-
«րութեանց անշուշտ զործադրել զայսոսիկ Հրահանգս
«վերաբերեալս պաշտամանց և պարտաւորութեանց
«Աւագ քահանայից, զորոց պատճէնն առաքեմք Դմին
«պատուիրելով և տպագրել առ ի տալ իւրաքանչիւր

«Ըստ եղեցանց զմի մի օրինակ ի ձեռն Թեմական
«Ընենից, որոց և պատուիրել աչալրջութեամբ հսկել
«անշուշտ ի գործադրութիւն վասն պայծառութեան
«և բարեկարգութեան Հայաստանեայց սրբոյ առա-
«քելական եկեղեցւոյ մերոյ և ի փառս։

ՀՐԱՆԳ

ՎԱՄՆ ԱՒԱՓ ՔԱՀԱՆԱՅՑԻՑ ԵՒ ՊԱՐՏՒՑ ՊԱՀՏԱՄԱՆ ՆՈՑԱ.

Ա. Աւագ քահանայ կամ աւագերէց ըստ վաղնջմ կարգաց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ կարգի հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց իբրև ի գլխոց Առաքելոցն հսկող ի վերայ բարեկարգութեանց եկեղեցւոյն առ հասարակ, որպէս և ի վերայ գնացից այլոց քահանայից և պաշտօնէից նոյն եկեղեցւոյ, յորում՝ և ինքն վարէ զպաշտօն քահանայութեան։

Բ. Աւագ քահանայութիւն ոչ է իբրև պէտք կամ լոկ պարզ ըստ ձիւր կարծեաց ումանց ուսելոց յօտարամուտ սովորութենէն, այլ կոչումն պաշտօն եկեղեցւոյ (1)։

Գ. Աւագ քահանայն իշխէ միմիայն եկեղեցւոյ իւրում՝ յորում ինքն վարէ զպաշտօն, իսկ ի քաղաքս և ի վիճակս՝ յորս ըստ բազմութեան եկեղեցեաց բազմաթիւ իցեն և Աւագ քահանայք կամ Աւագերէցք, մնարի է և առանձին կառավարիչս կարգել ի ներքոյ անուամբ՝ տալով նմա զմի աշխարհական ի ներքոյ անուամբ, որպէս տահմանեալ ենք կանխաւ։

Դ. Աւագ քահանային պարտ են միա դնել՝ զի մի ինչ գտանիցի յեկեղեցւոջ իւրում թերութիւն կամ հակառակ ինչ Ծիսից և Աւանդութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ ըստ ամենայն հանգամանաց, զի սպասք և անօթք և հանգերձք եկեղեցականք իցեն ի մաքրութեան և ի բարեկարգութեան, զի անթերի գտանիցին յեկեղեցւոջ ամենայն ինչ, որ պիտոյ իցէ ի կատարումն Ս. խորհրդոց, Մկրտութեանն, Դրոշմի և Հաղորդութեանն, այլ և Գրեանն կարդալ ի կատարումն Աստուածային պաշտամանցն, որպիսի են Աւետարան, Ճաշոց, Խորհրդատետր Սրբոյ Պատարագին, Տնտեսոյց, Ժամագիրք Առեղծ, Սաղմոս, Մայր Մաշտոց, փոքր Մաշտոց, Շարականն, Տաղարան և այլն այսպիսի մատեանք, և զի պատուհանք և լուսամուտք եկե-

(1) Պաշտօն Աւագ քահանայութեան համապօր է սպասաւորն Благочинный անուանեալ քահանային Ռուսաց, զորոյ զկոչումն թարգմանեալ են մերազնեայք Ռուսաստանի քաւիւս թարեկարգիչ կամ թարեկարգ։

դեղւոյն ունիցին վանդակս երկաթիս և փականք ղրանց իցեն ամրապինդք, և առ եկեղեցեաւն գոանիցի միշտ գիշերապահ ոք ի պահպանութիւն։

Ե. Եթէ եկեղեցին պէտս ունիցի նորոգութեան, Աւագ քահանային պարտ է ազգ առնել զայնմանէ երիցփոխանին և յորդորել զժողովուրդն՝ զի փոյթ կալցին նորոգութեան և միանգամայն ծանուցանել զայնմանէ Առաջնորդին։ Եթէ ժողովուրդն առ էքաւորութեան անկարող գտանիցի նորոգել զհնացեալ եկեղեցին կամ ընդ զկարօտութիւն նորին ի գիտաս կամ ի սպաս անօթոց, Աւագ քահանայն հանդերձ երիցփոխանաւն և հաշուետուիսբք հայցէ յԱռաջնորդէն զժապաւենեալ Մատեան (Տուամար) վասն հաւաքելոյ տուրս կամաւորս ի բարեպաշտից, այլ և միտ դնէ զի ղրամքն հաւաքեալք մտցեն ի հաշուեմատեանս մոխց և ծախուց, և ի գործ դիցին յայն գէպս միայն, յոր և կարգեալ են, և յաւարտ հաւաքեալ ղրամին կամ ժամանակին սահմանելոյ առ այն, մատուսցէ զմատեանն Թեմական Առենին հանգերձ տեղեկագրով։

Զ. Ցորժամ տացի հրաման կառուցանելոյ ուրեք զեկեղեցի, Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի շինուիցի եկեղեցւոյն լիցի ըստ ձևոյ Հայաստանեայց եկեղեցւոյ և ըստ վայելչութեան, և ըստ կարի անյապաղ և անընդհատ շինութեամբ, և եթէ յանկարծ գադարիցի շինուածն, ծանուցանել զայնմանէ Առաջնորդին։

Է. Աւագ քահանայն պարտի միտ դնել և ուշի ուշով նկատել և հսկել՝ զի քահանայք և սարկաւագունք և գպիրք եկեղեցւոյ իւրոյ յամենայն առուր անխափան գտանիցին ի սուրբ եկեղեցի, յառաւօտ և յերեկոյ և կատարեսցեն անթերի զպաշտամունս իւրեանց, և ունիցին վարս պարկեշտս և խաղաղասէրս վայելչչս առաքինի իւրեանց, և մի՛ երբեք հակառակ սուրբ կոչման իւրեանց պարապեսցեն ի խաղս զանազանս, այլ կեցցեն զգաստութեամբ և ամենայն զգուշութեամբ որպէս վայել է պաշտօնէից սրբոյ Սեղանոյն։ Իսկ եթէ տեսանիցէ զոք թերացեալ յայսպիսի պարտուց՝ նախ ինքն խրատեսցէ երկիցս և յանուղղայ գտանիցի փութապէս ծանուցանել Թեմական Առենին կամ Առաջնորդին առ ի զգաստացուցանել նմա։

Ը. Աւագ քահանայն պարտի փոյթ ունել՝ զի ամենայն բարեպաշտ ժողովրդականք կատարեսցեն անթերի զնդհատ պարտիս իւրեանց հաղորդելով կենարար Մարմնոյ և Արեան Տեառն յերիս նուագս ի տարւոջ, այսինքն ի սուրբ Զատկին, ի սուրբ Ծննդեան կամ Աստուածայայտնութեանն Տեառն և ի Վերափոխման Տօնի Սրբուհւոյ Աստուածածնին։

Թ. Աւագ քահանայն պարտի ուսուցանել ժողովրդեանն՝ զի առ հասարակ արք և կանայք յաւաչ քան զերկուս եօթնեակս կամ գէթ զաւթըն օր յառաջագոյն քան զհաղորդութիւնն խոստովանեսցին սեպհական խոստովանահօր իւրեանց և յաւուր հաղորդութեան ընկալցին զարձակումն ի խոստովանահօրէն և ապա հաղորդեսցին սուրբ Խորհրդոյն, բոլորովին հեռի կալով յօտարամուտ սովորութենէ, որ մուծեալ է յեկեղեցի մեր ի տեղիս տեղիս (Տարին ամաւ կամ գոյզն ինչ աւելի ժամանակաւ) յա-

ած — ի մի և ի նոյն աւուր խոստովանիլ և հաղորդիլ։ Եւ ի մէջ մեծի պահոց մինչ ծածկեալ է սուրբ Սեղան պատարագի, չէ օրէն հաղորդել զժողովուրդն սուրբ Խորհրդովն, այլ զկնի երրորդ շաբաթու աղուհացից. եթէ պատահեսցի Տօն Աւետման. կարելի է, նոյնպէս և ի Տօնի Մատնի ի վիրապն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, յորում լինի քաց պաշտպան, հաղորդեսցին, նոյնպէս ի ծաղկազարդի և յԱւագ Հինգշաբաթու աւուրս, և ի Ճրագալոյցի երեկոյեան, նոյնպէս և ի Զատկի աւուրն հաղորդեսցին, իսկ մինչ ծածկեալ է Սեղանն Ս. Պատարագի խաղօրդին սուրբ Խորհրդոյն օտարոց է ներմուծանել յեկեղեցի մեր, և միայն հիւանդաց և ընդերկար ճանապարհ գնացողաց է ներելի։

Ծ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի անպակաս կատարեսցին յեկեղեցւոջ ժամասացութիւնք յաւուրսն, և յերեկոյին և մատուցի սուրբ Պատարագ յաւուրս շաբաթուց և կիւրակէից անխափան, նոյնպէս և յայլ տօնական աւուրս, որք խաչ նշանաւ նշանակեալ են յօրացոյցի մերում, և ամենայն կարգք Աստուածպաշտութեան կատարեսցին ջերմեռանդութեամբ առանց շտապելոյ կամ համառօտելոյ ինչ ի կարգադրելոցն, այլև չմոռալ փոխարկել զնդանակս երգեցողութեան ի սրբոց Հարց, որ ընկալեալ և սահմանեալ են ի մէնջ ըստ արհեստի Հայկական ձայնադրութեան, և մի՛ ինչ աւելի մաղթանս կամ աղօթս կամ երգեցողութիւնս նորանորս յաւելուլ ի ժամասացութիւնս։

ԺԱ. Եթէ ոք ի քահանայից կամ յայլոց պաշտօնէից եկեղեցւոյ կամ յաշխարհականաց իսկ գործիցէ շփոթս ինչ եկեղեցւոջ կամ անկարգութիւնս՝ բանիւ կամ գործով, մինչև խափանել առ վայր մի կամ բոլորովին զկարգս Աստուածպաշտութեան կամ ժամասացութեան, Աւագ քահանային պարտ է ծանուցանել զայն Առաջնորդին առանց յապաղանաց։

ԺԲ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի քահանայք և սարկաւագունք, որ ունիցին խնէթ և հակառակութիւն ընդ միմեանս, մի՛ երբէք մատուսցեն զՊատարագն սուրբ, մինչև հաշտեսցին ընդ միմեանս. Աւագ քահանայն պարտի հաշտեցուցանել ընդ միմեանս և զիշնամացեալսն, և եթէ չհաշտեսցի յայսմ, ծանուսցէ Առաջնորդին։

ԺԳ. Աւագ քահանային պարտ է միտ դնել՝ զի հաղորդութիւն սուրբ պատուով և զգուշութեամբ պահեսցի ընծայարանին ի մէջ արծաթի ոսկեզօծ մանատփոյ։ Այլ և պահանջել՝ զի քահանայք պատուով պահեսցեն առ իւրեանս ի տխկել հարկին զմանանատուփն սրբոյ հաղորդութեան ի պէտս հիւանդաց և հաղորդն կամ Սրբութիւնն, որ ի նմա, մի՛ յոյժ հրնասցին այլ նորոգեսցի ըստ կարի յաճախագոյնս։

ԺԴ. Աւագ քահանային պարտ է միտ դնել՝ զի փութով ի միջոցի ութն աւուրց անխափան մկրտեսցին մանկունք նորածինք, և մկրտութիւնն անշուշտ կատարեսցի եկեղեցւոջ առ ընթեր ունելով իւրեանց ի պաշտամանն զնաիկաւագունս և զպիրս։

ԺԵ. Աւագ քահանայն պարտի ղեկոյշ լինել՝ զի մի՛ մեռեալք պահեսցին ի ժողովրդական եկեղեցին առաւել քան զկերկուս ժամս, և յետ կատարելոյ զՀանգստեան պաշտօն ի վերայ մեռելոյն՝ տանիլ ի գերեզման և թաղել յետ անցանելոյ օրինադրեալն ժամուց, իսկ եթէ դառնիցի ի գերեզմանատան առանձին մատուռն վասն ննջեցելոյ, ըստ հնագոյն սովորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, անդ կարեն պահել զմեռեալն, որքան միջոց և կամիցին, բայց ղեկոյշ լինելով առողջապահական կանոնաց։

ԺԶ. Աւագ քահանայն պարտի ղեկոյշ լինել՝ զի մի՛ օր ի քահանայից ի սարկաւագաց կամ ի պլրաց եկեղեցւոյ իւրոյ աղտեղի կօշկօք կացցէ ի դասի, կամ առանց Հանելոյ զկօշիկս և ապանելոյ զՀոդաթափս մաքուր ելանիցէ ի բեմն։

ԺԷ. Զմոռալ զի յեկեղեցիս մեր Հնարեսցին Թափօրք և Հանդէսք նորանորք կամ շինեսցին խորանք և մատուռնք նորք Հակառակ ձեւոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։

ԺԸ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի ի Տօնս Սրբոյ Զատկի և Առաւածայայտնութեան քահանայք ըստ պատշաճի և վայելչապէս կատարեսցեն զանօրհնէս նոյնպէս և զայլ այսպիսի արարողութիւնս առանց բնաւ տեղի տալոյ անկարգութեանց և արբեցութեանց։

ԺԹ. Աւագ քահանայն պարտի փոյթ յանձին առնել յաւուրս կիւրակէից և Տօնից տալ ժողովրդեան խրատս հոգևշահս և առնել ծանուցմունս նաև բանալ զօտարամուտ սովորութիւն քահանայից ի խոստովանութեան պահու ստանալ զրամս ի խոստովանատրէից։

Ի. Աւագ քահանայն պարտի ղեկոյշ լինել՝ զի մի՛ քահանայք զրկեսցեն ղսարկաւագունս և զպլիրս՝ մի՛ բնաւ հարկանել զնոսա, իսկ եթէ յանցեալոր ինչ գտանիցին նոքա՝ պարտին քահանայք ազդ առնել Աւագ քահանային և եթէ շարունակեսցեն, յայտնել Առաջնորդին։

ԻԱ. Սարկաւագունք և դպիրք պարտին մեծարել զքահանայս իւրեանց և հնազանդել նոցա և ոչ երբէք անարգել զնոսին բանիւ կամ գործով. իսկ եթէ նեղիցին ի նոցանէ, յայտնեսցեն Աւագ քահանային, եթէ շարունակեսցեն և կամ Աւագ քահանայէն իսկ նեղեսցին՝ բողոքեսցեն առ Առաջնորդն։

ԻԲ. Աւագ քահանայն պարտի զգուշացուցանել զքահանայս և զսարկաւագունս ի զօշաքաղութենէ, և մի՛ նեղեսցեն և զլուեցուսցեն զժողովուրդն պահանջմամբ առաւել քան զչափն արծաթոյ կամ այլ տրոց, և մի՛ սակարկեսցեն վասն կատարման Ս. Խորհրդոց, Մկրտութեան, Պսակի, Ս. Պատարագի և Թաղման և այլն։

ԻԳ. Զէ օրէն սարկաւագաց և քահանայից առանց հրամանի Աւագ քահանայի գնալ ուրեք հեռագոյն քան զվերստս 25, և ոչ առ մի օր, իսկ ի հարկաւոր գէպս գիտութեամբ և հրամանաւ Աւագ քահանային կարեն գնալ և ի հեռաւոր տեղիս, բայց միայն յիւրեանց վիճակին, իսկ յայլ վիճակ ոչ բնաւ։

ԻԴ. Ի մեռանիլ քահանայի կամ սարկաւագի ուրուք, Աւագ քահանայն պարտի անյապաղ ծանուցանել Թեմական Ատենին, տալով տեղեկութիւն զմեռելոյն ընտանեաց նորին և մատուցանելով զթուղթս նորա պաշտօնական, միանգամայն և յօրինելով ղցուցակ ստացուածոց մեռելոյն՝ առաջի առնել Թեմական Ատենին։

ԻԵ. Աւագ քահանայն ի մեռանիլ ուրուք քահանայի եկեղեցւոյ իւրում անյապաղ գնալով առ Ժողովուրդն նորա ստուգեսցէ զկեղեցական ստացուածս և զդրուածս, որ գտանիցի առ նմա, յանձնէ նորումն քահանայի որ փոխանակիցէ զառաջինն և կամ ցնշանակել նորոյն, այլում ուժեք ի քահանայից յանձնէ՝ յանդիման երեցփոխանին։ զնոյն առնէ և ի դէպս հրաժարման կամ մահու երեցփոխանի ուրուք, և եթէ պակաս երևեսցի ինչ ի քննութեան, Աւագ քահանայն զդին կորուսելոյ իրին և զանուն կորուսանողին ծանուցանէ Առաջնորդին։

ԻԶ. Աւագ քահանայն պարտի հսկել՝ զի քահանայք և սարկաւագունք և դպիրք եկեղեցւոյ իւրոյ իցեն ի հանդերձս վայելուչս աստիճանի իւրեանց և մանաւանդ զվարկք նոցին միատարազ և բարեձև և զանազանեսցին յաշխարհական անձանց արտաքին եկեղեցական բարեվայելուչ զգեստուք։

ԻԷ. Աւագ քահանայն յընդունել իւրում ի Հոգևոր իշխանութենէ հրամանս և պատուէրս՝ քաջ խնամուած լինի իմաստից նոցին և ճշդիւ ի գէպ ժամու կատարումն տացէ նոցին, չյապկլլով մինչմ կողմանէ ի հրամանան գնիքնական՝ բացատրութիւնս և գերկրային եղրակացութիւնս պարագասանս այլոց եկեղեցականաց ինքն լուծցէ, իսկ յորժամ և ինքն երկմտիցէ, խնդրեսցէ զլուծումն ի Թեմական Ատենէն կամ յԱռաջնորդէն։

ԻԸ. Աւագ քահանայն պարտի զգոյշ լինել՝ զի մի չհաս և անօրինի պսակ դիցեն քահանայք եկեղեցւոյ իւրոյ, ինկատել զպատօրինութիւն ինչ՝ իսկոյն պարտի արգելուլ և անյապաղ գրութեամբ յայտնել Առաջնորդին և Թեմական Ատենին։

ԻԹ. Աւագ քահանայն պարտ է զգոյշ լինել՝ մի՛ ընաւ պսակ դնել եկեղեցոյ յայլոց ծիսոց, խստիւ արգելեալ է նաև յայնպիսի դէպս, յորս մին յեկեղեցւոյ յամուսնութիւն իցէ ի տեղական ժողովրդենէ և միւսն՝ յօտար քաղաքէ կամ ի գիւղէ, պարտի անպատճառ վաւերական վկայականս պահանջել յօտարականէն՝ հաստատեալ յԱռաջնորդէ վիճակին օտարականին, յոր վիճակաց և իցէ, թէ ի Ռուսաստանէ, թէ ի Տաճկաստանէ, թէ ի Պարսկաստանէ և յայլոց տեղեաց, ուշղակի գրել առ Առաջնորդն նոյն վիճակի և տեղեկութիւնս պահանջել ստորագրութեամբ Առաջնորդի իւրոյ քահանայի և համաքաղաքացւոյ, մի՛ իշխեսցեն պսակ դնել քահանայք, մինչև ստացին զյիշեալ վաւերական վկայականս ստորագրութեամբ քահանայի իւրոյ համաքաղաքացւոյ և ազգակցաց օտարականին՝ հաստատեալ յԱռաջնորդէ վիճակին։ Ա յսպիսի վկայական պահանջի նաև ի պա-

առանկուածինէ անոի պանդխտեալ յօտարականէն, զի մի՛ գուցէ արդէն առ-
նուացեալ լիցի օտարականն և առուսինն կենդանի լիցի։

Լ. Աւագ քահանայն պարտի փոյթ ունել՝ զի արձանագրական (մետրի-
քական) մատեանք ի դէպ ժամանակի պատրաստեալ տացին քահանայից
եկեղեցւոյ իւրոյ անդէն ի սկզբան նորոյ տարւոյն։ Նա ինքն միտ դնէ, զի
ուղղութեամբ և ի ժամու և միօրինակ եղիցին յամենայն մատեանս ար-
ձանագրութիւնք. երկիցս և երիցս ի տարւոջ սատուգեսցէ զիրսն, իւրով
ստորագրութեամբ վաւերացուցանելով զայնս։

ԼԱ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի անկորուստ պահիցին ի պա-
հարանի եկեղեցւոյն ցուցակք անօթոց և սպասուց և ամենայն եկեղեցա-
կան իրաց։ Այլև զգուշութեամբ պահեսցին ամենայն հրամանագիրք
պատշաճեալք եկեղեցւոյն, որպէս և արձանագրական մատեանք և հաշուա-
մատեանք ամացն անցելոց, և այլն։

ԼԲ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի մի՛ քահանայք յափշտա-
կեսցին զմիմեանց ծուխս՝ կատարելով զպաշտամունս նոցա։

ԼԳ. Աւագ քահանայն պարտի միտ դնել աչալրջութեամբ՝ զի երկցիս-
խանք անպատճառ և ըստ օրինի գրեսցին ի հաշուեմատեանս տուեալս նո-
ցա ի Թեմական Ատենէն ցհաշիւ մոից և ելից, և մի՛ ինչ ծախս երևելիս
արասցեն առանց գիտութեան իւրոյ և առանց հաւանութեան ժողովրդա-
կանացն։

ԼԴ. Աւագ քահանայն պարտի հսկել, զի ի ծխական երկսեռ դպրոցս ան-
պատճառ աւանդեսցեն զքրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց
եկեղեցւոյ ի ձեռն հմուտ և ուղղափառ ուսուցչաց, և աջակցել հոգա-
բարձութեան ի բարեկարգութիւն և ի յառաջադիմութիւն դպրոցացն։

ԼԵ. Աւագ քահանայն մի՛ իշխեսցէ թողուլ օտարական վարդապետաց
և քահանայից փիլըն առնուլ յեկեղեցւոջ իւրում՝ մինչև չունիցին յանձ-
նարարական գիր ի Սինօդէ Սրբոյ Էջմիածնի։

ՎԵՀԱՆՋՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԵԾԱՀՈԳՈՒԹԻՒՆ.

Ա.ւելի բարձր, ա.ւելի վսեմ նպատակների պիտի ձգտես, քան Ք՛ինչ որ սոսկերի նման անցաւոր ունա՛յն աշխարհս է քո առաջին դնում: Ցաւիտենական կեանքի սերմերը քո հոգւոյդ ապարակի մէջ արդէն ցանուած են: Ա.յդ սերմերին դու հոգ ու խնամք պէտք է տանես ամենայն հաւատարմութեամբ, ամենայն ջանքով: Եւ, արիւ ու անձրեւ տնտնելով քո դաշտդ, քո կրպայ, հնձուելու համար հասած, ներմուծած կլինի: Ա.յն աղնիւ ցորենը, որ մեք այստեղ կինձենք, այնտեղ երկնային հաց պիտի դառնայ մեզ համար: Մեք ուրախ սրտով հաւաքուենք մեր որսները Քաղաւորական խնջոյքի համա՛ր: Թագաւորն իւր ամսւից կոսի մեզ, եկ հաւատարիմ ծառայ, այժմ սուացիր քո աշխատութեանդ վարձը իմ մօտս, քո որդիական իրաւունքիդ տէրը դարձի՛ր: Հասկանում ես արդեօք այս խօսքի միտքը, այն է Ք՛է, ամեն մի մարդ, ինչ որ ցանել է, այն է հնձում: Եւ երբ որ քեզ այն խնջոյքին հրաւիրող Ա.ստուածային ձայնն ականջիդ հասնի, պատրաստ ես արդեօք ուրախութիւն վայելելու:

Մարդիս ա.ւելի շատ անգամ իւր ապրուստն եմ տեսնում, — բայց եղի՛ր է արդեօք այնպիսի մի ժամանակ, որ ես նորան իւր կոպտութեա՛ն մէջ տեսնէի:

Շատ ու շատ անգամ տեսել եմ ես նորան միայն զգայական կեանքի անձնատուր, անբան կենդանեաց նման ապրելիս, որ այնպէս ես իւր կեանքն անց է կացրել ու մեռել, գնայել. շատ ու շատ անգամ տեսել եմ ես նորան, որ խելքը, միտքը տուած է եղել միայն մեծ փողերի տէր դառնալու, կամ հպարտութիւնն իրան զարդարանք անելու. տեսել եմ, թէ ինչպէս վերջը նորա բոլոր ուրախութիւնն՝ իւր վերայ ունեցած մեծ մեծ ու երեւակայական կարծիքներն են եղել, որ նորան հպարտութեան են տարել, կամ կերուխումի զուարճութիւններն են եղել, որ ամենամեծ վայելչութիւն քաշել է համարել իւր համար աշխարհիս երեսին. տեսել եմ, ինչպէս աշխատում է եղել անդադար իւր մարմնաւոր դրութիւնն, իւր նիստ ու կացն լաւացնելու, իսկ իւր սիրտն ու հոգին լաւացնելու մասին, կարծես թէ միայն այդպէ՛ս եղել երկրորդական բանն, որով վերայ ամենեւին ո՛չ մտածել է, ո՛չ հոգս արել. տեսել եմ, ինչպէս նա իւր խելքը միայն լոյս անելու, լուսաւորելու է աշխատում, տեսակ տեսակ ուսում ու գիտութիւններ իւր մտքին, իւր գլխի մէջ ամբարում

առաք առաք արհնաներ, ճարտարութիւններ սովորում, կարծես թէ իւր հոգւոյ վնաս ուժգին Աստուածանից նորա համար է միայն մարդիս տուած, որ աշխարհիս երեսին եղած ամենայն արարածներից ամենահնարագէտն, ամենախորամանկն, ամենաօրաւորն ու միանգամայն ամենաչտանգաւորն լինի. տեսել եմ, ինչպէս նա՝ առանց քաշուելու, առանց պզուշանալու անձնասուր է եղել իւր հաճոյքին, իւր սրտի ուղածին, ինչպէս նա, առանց ամաչելու, իւր կրքերից յաղթուել է, միևնոյն որ վերջապէս մոլութեան խաւարչուկն անդունդքի մէջ գլորուել, կործանուել է. տեսել եմ, ինչպէս նա մի հաւատ է դաւանել, որ ոչ թէ սրտի հաւատքն է եղել, այլ քաղաքական սովորութեան հետ գնալու համար է եղել միայն, որ հաւատ ունեցող է ձեւացել. տեսել եմ, ինչպէս դէպի Աստուած աղօթքներ է բերնից դուրս տալ, թափել, իբր մի ծէս, մի արարողութիւն կատարելով, որով Աստուծոյ հետ, որ բոլոր աշխարհիս կառավարիչն է ու մեռելոց անգամ դատաւորը, միևնոյն անգամ Աստուծոյ հետ ասուելիք, իբր թէ իւր բանը պրծել է, պարապից դուրս եկել. տեսել եմ միևնոյն անգամ, ինչպէս շատ անգամ Յիսուսի կրօնը իւր ամենաստեւ չարագործութիւնների ծածկոյթին ու վերարկուն է արել (շինել):

Ա՛ն միևնոյն որ ասոնցմեն մարդս շատ անգամ կարող է դատանալ ու մոլութեան խոր ցեխի մէջ խրուելէ: Թէեւ նորա հոգւոյ մէջ երբէք չէ հանգչում այն կրակը, այն մեծ ցանկութիւնը, որ ունի երջանկութեան ձգտելու, հասնելու կողմանէ, բայց եւ երբէք բոլորովին բարեպաշտ չէ, ինչու որ բաց աչքով վարուելէ դէպի ի կատարեան անդունդքը, կտեսնէ թէ, մի աներեւոյթ զօրութիւն նորան քաշել է ու քարշաքարշ տանում հետն: Սուտ չէ, որ մի անողորմ, մի աներեւոյթ զօրութիւն նորան քաշկռտելով տանում է հետն, այս անգամ զօրութիւնը՝ իւր կրքերն են, որ նորա հոգւոյն վնասներ, նորա սրտի հանգստութիւնն խանգարում:

Պէտք է ուրեմն այն մարդը, որ իւր կատարեալ բարձրութեան մէջն է, ինչպէս որ սահմանաւոր է Աստուծոյ պատկերը լինելու: Այդ եօթ քրիստոնեայն է, որ ինքն իրան ճանաչելով, միշտ իւր անձի վերայ չարս աչքով է մտիկ տալի, որ սուր ծուռ չգնի ու մի սխալանքի մէջ չընկնի, եւ որ ինքն իւր վերայ ունեցած իշխա-

նուիրելը բանեցնում է իր սրտի ամենայն շարժմունքի վերայ։ Արդեօք նա այն ժամանակին արդէն կատարեալ է, այլ եւս ոչ մի պակասութիւն չէ՞ երեւում նորա վերայ։

Ա՛յո, գովուեմ եմ, եւ բարձր մարդ եմ ճանաչում Յիսուսի այն ազնիւ աշակերտին, Նորան ճշմարիտ սրտով եւ ամենայն հաստատմունքիւնով հետեւողին, այնպիսի քրիստոնեավայել հեանք ունեցողին, որ անկախ է ու ազատ պատուասիրութեան, ունայնասիրութեան, զեղխութեան, բարկասրտութեան ախտերից, որ նորան ակրել չեն կարող. ես այդպիսի մարդին՝ գերիների մէջ՝ միայն ազատ ու անձնիշխան մարդ եմ ճանաչում ու ամենայն սրտով պատուում եմ։ Ամենայն յարգանքի արժանի է նա, ինչու որ ոչ մի արտաքին այժ ու իշխանութիւն նորան ընդդէմ չէ կարող, ոչ մի բաղդաւորութիւն նորան իւր չափը կորցնել չտայ, ոչ մի անբաղդութիւն նորան կատարել չէ կարող,—նա ամեն փոթորիկների տանում, դիմանում է եւ անսասան մնում։ Այդպիսի մարդի վերայ աւելի ենք զարմանում եւ աւելի արժանաւոր մարդ ենք ճանաչում գտնեն, քան թէ այն աշխարհակալին, որ ազգեր նուաճելով իւր հզօր զօրութիւնով, իւր իշխանութեան լուծի տակն է ձգում, բայց իւր պատուասիրութիւնն նուաճելու այժ ու զօրութիւն չունի. այդպիսի քրիստոնեայն աւելի զարմանալի, աւելի արժանաւոր մարդ է, քան թէ արհեստաւորների մէջ ամենագիտաւոր արհեստագէտն ու գիտունների մէջ ամենագիտնականն, որ այնպիսի գործեր է կատարում, այնպիսի բաներ լոյս գցում, որոց վերայ մարդ հիացած, ապշած է մնում, հրաշք բան աչքի առաջին տեսնելով, որ բոլոր աշխարհ կզարմանայնի, բայց ձեռքներից չէ գալիս իրանց սրտի ու հոգւոյ մշտական խաղաղութիւնն հաստատ կերպով գտնելու։

Կատարելութեան ամենավերջին ու վիճակական ամենաբարձրը աստիճանն միայն ինքն իրան յաղթելն է. այս դժուարագոյն, այս խորտուբորտ ու բարոյապէս սեպացած բարձրութեան վերայ է, որ պիտի մագլցի վեր բարձրանալը։

Եթէ այդ լինէր, Աստուածային լուսաւորիչն աշխարհիս՝ Քրիստոս ուրիշ բան սովորեցրած չէր լինիլ, բայց միայն այն, ինչ որ հին ժամանակի խնամատուններն, վիլլատիաներն արդէն տասած ու գրած էին։ Ա՛յո, Յիսուս Քրիստոս դեռ եւս աշխարհ չէկած՝ մարգկային սրտը փրկելու համար, արդէն շատ յառաջ խնամ-

տունների, աշխարհիս վերայ ապրող, մարդոց տուած ուսումն այն էր թէ, մարդիս իւր ամենաբարձր արժանաւորութեան համար նախապատրաստողն՝ ինքն իրան ճանաչելն ու ինքն իրան յայտնելն է, ոչ միայն այդ էին սովրեցնում թէ խօսքով եւ թէ գրով, այլ ուելին արին, նոքա իրանց վարքովն ու կեանքով օրըստօրէ օրինակներ տուին եւ ապացուցին, որ այս առաքինութիւններին հասնելն անկարելի չէ։ Նոքա, այո՛, գործով կատարեցին, ինչ որ բերանով ասում էին։ Դեռ այժմ եւս աշխարհ ամենայն յորգանքով է միտք բերում ու բերան առնում այդպիսի՛ մարդոց անուններն։ Ո՛վ դուք քրիստոնեայք, որ ձեր ծուլութիւնից վրաներդ դող է ընկնում, երբ որ բանն այդ երկնային պարտաւորութիւնները կատարելուն է գալիս, մտածեցէք ամաչելով, որ նոքա հեթանոս էին, ունէին ու կատարեցին այդ առաքինութիւնները։ Դեռ եւս Քրիստոս Փրկիչն աշխարհիս վերայ չէր երեւել, — նոքա միւթ կերպով զգում՝ հասկանում էին ու մտածում՝ որ յաւիտենական կեանք պիտի լինի, բայց Աստուածային յայտնութիւնովը մեզ քրիստոնէից համար զմայլելի տուգութիւն դարձաւ։ Այո՛, նոքա ունէին այն առաքինութիւնները, որ գործով կատարեցին, եւ այդ ինքնաճանաչութիւնն ու ինքնայաղթութիւնն ունեցողներն ու անոնցները դիտէք, թէ ովք էին. հեթանոսներ միայն. իսկ մեք քրիստոնեայք եմք եւ, քրիստոնեայք լինելով, զուրկ ենք գոնէ նոցա ունեցած առաքինութիւններէն, որ, յիրաւի, հեշտ բան չէր

Բայց գերագոյն ու անհամեմատ վսեմ կերպով ուսուցչին Քրիստոս աշխարհ գուրս եկաւ իւր երկնային լմնատութեան լուսափայլ պայծառութիւնովն ու աւելի էր պահանջում։

Նա եւս պահանջումէր մարդկից, որ ինքն իրան ճանաչի, պահանջումէր, որ ամեն մի մարդ ինքն իրան քննի, իմանայ թէ ինչ աստիճանի, ինչ արժանաւորութեան տէր է Աստուծոյ եւ իւր նմա առաջին, ուրեմն եւ ճանաչի իւր անարժան մարդ լինելն Աստուծոյ, իւր նման մարդոյ եւ իւր նմա առաջին, որ իւր սրտի սխալներն ու բռնած ծուռ ճանապարհներն քննելով, տեսնելով, ուղղել կարողանայ, որ մոլութիւնից, մեղքից հեռու մնալ ջանայ։ Նա եւս պահանջումէր անձնուրացութիւն, ինչու որ, ինչ մարդ որ իւր հաճոյքին սանձ դնել անկարող է, իւր հաճոյքի լուծի տակը պէտք է մնայ։ Բայց այս ամենն անուսումն

աւելի աղնուամիտ հեթանոսներն եւս։ Նոքա աստուածներին դեղից մարդի շռայլութիւններն, անառակի անառակութիւնները, վատասիրի, պատուամոլի փառքի, պատուոյ համար հոգի տալն, արբեցողի գինեմոլութիւնն. նոքա արհամարհում էին արծաթասիրութիւն, ամբարտաւանութիւնն ու անմտութիւնը, ընչասիրութեան անյագութիւնը (աչքը չկշտանալը շատ բան ունենալուց) եւ ամենայն տեղ իւր օգոյն յեռանից ընկնող, իւր շահը պատռող շահասիրութիւնը։ Բայց այս ամէն առաքլինութիւնները դեռ եւս կատարեալ քրիստոնէի առաքլինութիւններ չէին։

Աչխարհիս Փրկիչն Յիսուս Քրիստոս մարգկոյս սորանից աւելի բան էր պահանջում՝ Նոթոջոյ նման լինել։

Հերիք չէ, ասում էր նա, որ մի մարդ իւր բարկութիւնը չափաւորի, լինչն իրան բռնի բարկացած ժամանակը, չէ, այդ դեռ եւս բաւական չէ, մի բան չէ, բանն այն է, որ դուք ձեր թշնամիներին սիրէք, ազօթք անէք այն մարդոց համար, որոնք որ ձեր սիրտը սաստիկ ցաւեցնում ու ձեզ հալածում են, ձեզ նեղութիւններ տալուց աչք չեն թողում բայ անել. այս բանները պիտի անէք, որ ձեր երկնաւոր Հօր զաւակները լինիք։ Ինչու որ նա իւր արեւը ծագում է թէ չար, եւ թէ բարի մարդոց վերայ ու անձրեւը թափում է թէ արդարների եւ թէ մեղաւորների վերայ։ Եթէ որ ձեզ սիրողներին սիրէք, ինչ վարձք պէտք է ստանաք. մաքսաւորներն եւս նոյն բանը չէն անում արդեօք։ Եւ լինչ որ ձեր եղբայրներին էք սիրով անում, լինչ մի մեծ բան էք անում. մաքսաւորներն եւս նոյնը չէն անում արդեօք։ Ո՞ւմն պո՞ւ պնպէս կոպտութիւ պէտ է լինէ, ինչ պէս ոչ Յէր երկնաւոր Հայրը կոպտութիւ է։

Այս խօսքերը մի երկնային լուսոյ ճառագայթ է։ Բաւական չէ, որ մենք մեզ վերայ այնպէս կատարեալ կերպով կարողանանք իշխանութիւն բանեցնել, որ մեր հակումները ոչ մի անարգար քայլ անելու մեզ տանել չկարողանան, մեզ սխալեցնելով. մեր միտքը պէտք է չդնենք թէ, արդէն բան չմնայ այլ եւս մեզ անելու, սորանից աւելի եւս բան անելը կարելի չէ, ո՞ւմն Նոթոջոյ օրհնութիւնն ձեզ վերայ լինեցին, ասե՞ց։ Զկարծի մի մարդ, որ արդէն առաքլինի է, որովհետեւ լինքն իրան այնպէս իւր ձեռքի մէջն հաւաքած, բռնած ունի, որ գիտենալով, իւր ոտը ծուռ դնել ամենեւին չի՞ պղնիլ. չէ, դա չէ առաքլինի

մարդն, այլ նա, որ դրսի հանգամանքների վերայ ուշադրութիւն չդարձնելով, մարդ չջոկելով՝ թէ ո՛րն է արժանի ու ո՛րն անարժան՝ բարիք (լաւութիւն) է անում, եւ կարող է ուրիշների սիրոյն համար իւր անձը մատաղ անել։

Աչխարհիս վերջ մարդիս հասնելու կատարելութեան ամենաբարձր աստիճանը, կատարելութեան ծայրն այս է։ Քրիստոսի հարազատ աշակերտն, ինքն իրան բարձր է ճանաչում ու բըռնում կռիւ սիրելուդդ, մի վատ իսօք ասելու պատճառներ գըտնելուդ ու բռնելուդ, խորամանկութիւններից, կամ ծածուկ հնարներ բանեցնելուդ, որ ուրիշի վերայ վատը միայն տեսնի, պակասութիւնը միայն գտնի, — որովհետեւ իւր հոգին վատ մարդոդ վատ հոգին չէ, որ ուրիշի վերայ լաւը տեսնելը չէ կարում, չէ սանում, նախանձում ու ատում — Քրիստոսի ճշմարիտ աշակերտն հեռու է վատ մտքեր ունենալուց եւ իւր համար անարժան բան է իմանում արժանաւորի արժէքը չճանաչելը, մանաւանդ ցած բան է համարում մի մարդի յետեւից ընկնելն, ծածուկ հնարներ բանեցնելն նորա համար՝ վատութիւն անելու մտքով, նենգ մտքով որոգայթներ լարելն ու դաւեր դնելն՝ նորա անունը կոտրելու, կամ վնասելու համար, կամ մի մարդու խայտառնելն, մանծծելն, ուշացնելն, նորա արժանաւորութիւնն, կամ արդարութիւնն, կամ ունեցած իրաւունքն չճանալելու եւ չընդունելու համար։ Քրիստոսի իսկական աշակերտն հասարակ մարդոց վարած կեանքից, նոցա ունեցած ու բանեցրած՝ մարդիս անարժան կրքերից բարձր է ու ազատ. նորա սրտի ուղեցոյցն այն է, որ լաւութիւն անի մարդոց, բաղդաւորութեան պատճառ լինի եւ այնտեղ եւս իւր լաւութիւնը հասնի, ուր որ ուրիշները վատութիւն անելու են վազում՝ սիրտները ուրախացած։ Նա բարձր է այն վերքերից, որ սանձանում է, նա չէ վշտանում. նորան վիրաւորողները չեն կարում նորան արգելել, որ նա բարի կամենայ նոցա, որ իրան աստուծեն։ Նորա վրէժխնդրութիւնը՝ ներելն ու մոռանալն է։ Նա բարձր է չնչին մարդոց այն ջանքերից, որով իրանց բոլոր կեանքն մէջ տեղ են գնում, որ ի՛նչ է հեշտասիրութեան ու ունայնասիրութեան մէջ գտնեն իրանց գերագոյն բաղդաւորութիւնը։ Քրիստոսի ճշմարիտ աշակերտի ամենամեծ ձգտումն՝ Աստուծոյ հետ մի լինելն է, նա, որ իրան միշտ սանձած է պահում, որպէս

զի իւր սիրոյը սխալանք անելուց ազատ մնայ, սխալանքի մէջ ընկնողներին չէ տառում, այլ նոցա վերայ մտիկ է տալի որպէս ուղիղ ճանապարհից խափանողի, չխմանալով դուրս եկողների վերայ, մտիկ է տալի նոցա վերայ, իբրեւ այնպիսի մարդոց վերայ, որ սխալուելով, ընտրել են իւրեանց իբրեւ նպատակ մի սուտ բաղդաւորութիւն, կամ մի ծուռ միջոց՝ իւրեանց նպատակին հասնելու համար։ Նա ջանք է անում, մի խմաստուն կերպով բայց անելով նոցա աչքը ու լուսաւորելով նոցա միտքը, այնպէս անի՝ որ նոցա արած վատ բանն այնչափ իրանց վնաս, կամ չարիք չբերի, քան թէ որքան որ պիտի բերեր։ Նա անձնասիրութիւնից, անձնաշահութիւնից հեռու է՝ նորա ցանկութիւնն ու միտքը այն չէ, որ ինքն մարդոց մէջ ամենաազնիւն երեւի, որ իրան գովելով, երկինք բարձրացնեն. եթէ որ նորա մտքինն այդ լինէր, նա ազնիւ չէր լինիլ։ Նա բարի բանն անում է, բայց ոչ թէ մի աւելի բարձր, մի աւելի լաւ վարձատրութիւն ստանալու համար. չէ. եթէ այդ մտքով լինէր, նորա առաքինութիւնն այլ եւս առաքինութիւն չէր լինիլ, այլ մի անձնաշահութիւն, մի օգտասիրութիւն, որ խելք բանեցնելով, հասաւ իւր սրտի ուզեցածին։ Չէ, Քրիստոսի ճշմարիտ աշակերտն այդ խելքի ու մրտքի, այդ սրտի տէր մարդը չէ ամենեւին։ Նա սիրում է առաքինութիւնը նորա համար, որ Աստուածային բան է, նա ցանկանում կատարեալ լինել նորա համար, որ իւր երկնաւոր Հայրը կատարեալ է։

Այս է իսկական բարձրութիւնը, այն վսեմութիւնը, որ Քրիստոս պահանջում է իրան հետեւողից, իւր աշակերտից, Ա-պո-աՅ ո- է-ը նման մարդին ոչխարն այս քաղցր-ընեան է-ին-ն է, եւ հաճոյո-ին-ը նորա օգն է։ Այս բարձրութեան հասնել ցանկացողը վերինի համար է ապրում. նորա համար ամենավերջին բանն է այն, ինչ որ հողից է ու հող պիտի դառնայ։ Նորա համար յաւիտենականն է իսկական կեանքը, այս պատճառով երկրաւոր կեանքը նախապատրաստութեան աստիճան է համարում յաւիտենական կեանքի հասնելու համար։ Նա մարդկային կարգ ու կանոնն յարգում է իբրեւ միջոցներ բարեբաղդ կեանք մարդոց մէջ պահպանելու եւ յառաջ տանելու համար. բայց ճշմարտութիւնն ու իրաւունքը մարդկային ամենայն կարգապրութիւններից բարձր է ճանաչում, ինչու որ հողեղէն մարդա-

իւր խելքից հնարած վայրկեան ու վառաւոր միջոցներից շլանալով, շատ ու շատ անգամ մոքիցը ձգումէ իւր հեռաւոր պատուական նպատակին։ Այդ վսեմութեանը բարձրացող մարդի համար ամեն բանի տեղ Աստուած է, այլ եւս ուրիշ բան չկայ, որ նորա համար աւելի փափագելի լինէր. Աստուած է, ասումեմ, որովհետեւ Աստուած է ամեն բանի մէջ։ Այդպիսի մարդը սիրումէ կեանքը, որովհետեւ Աստուածանից է պարգեւուած. բայց մահիցն եւս չէ վախենում, որովհետեւ մեր կեանքին, մեր գոյութեան կերպի փոխուելն է միայն։

Ո՛վ գերագոյն Յիսուս, այս է քո կրօնը, որ հողեղէն մարդոց կեանքի համար աշխարհ բերիր ու նոցա տուիր երջանկութեան մէջ, հոգ գառնալու բաներին եւ Աստուածութեան մէջ։ Յիսուսի սուրբ խօսքը լուսոյ ճառագայթի նման ընկնումէ իմ սրտիս մէջը. աւելի պարզ ու պայծառ կերպով հասկանումեմ նորա երկնային մտքի խորհուրդը թէ, Ինչ այնպէս կապուել պէտք է լինի, ինչպէս որ Յիսուսը կապուեցաւ է։

Բրիստոնէի վեհանձնութիւնը՝ իւր մարմինը բոլորովին բանի տեղ չդնելու, անխնամ թողնելու մէջը չէ, կեանքի երկրաւոր ուրախութիւններին համար լինքն լրան մեռած համարելու մէջը չէ. ոչ, Աստուած լինէ այս մարմինս տուել է ինձ, որպէս իմ ամեն կարմն պէտք է ներգործեմ աշխարհիս վերայ։ Այս գործիքն ես պէտք չէ արհամարհեմ, կամ անխնամ պահեմ, որովհետեւ ինձ կզրկեմ Աստուածանից լինէ պարգեւուած ամենանշանաւոր գործիքից, որով հոգիս իւր կատարելութեանը պէտք էհասնի։ Բայց գործիք միայն կարող եմ ճանաչել իմ մարմինս, ոչ թէ մի աւելի բան։ Բաւական է, որ հոգ տանիմ մարմնիս ոյժը տեղը պահելու եւ չպակասացնելու եւ միանգամայն խնամք տանիմ մարմնիս առողջութեանը, այլ եւս ուրիշ բան լինէ չմնալ մարմնի համար անելու։ Մարմնի արտաքին գեղեցկանքն ու լինչ որ դիւր է գալի նորան, այսպիսի բաները՝

անցաւոր ու երկրորդական բաներ են։ Քրիստոնեայն՝ հասարակաց երջանկութեան գերագոյն նպատակները յառաջ տանելու համար՝ ուրախութեամբ ամենայն բան զոհում է, երբ որ տեսնում է, որ իւր զոհաբերութիւնովն այդպիսի մի մեծ բարիք յառաջանալու պատճառ պէտք է լինի լինքն։ Հիւանդութիւն, վէրքեր, ցաւեր, մահ — մեծահոգի քրիստոնեայն բանի տեղ չէ դնում, երբ որ բանն այնտեղ է գալիս, որ ճշմարտութիւնը պիտի պաշտպանել կարողանայ մինչեւ վերջը, երբ որ իրաւունքն ու արդարութիւնը տեղը պիտի տանի, երբ որ հաւատքը պէտք է պահպանի, երբ որ անմեղին տէր պէտք է կանգնի, երբ որ մարդոց բարեբաղդութեան պատճառ պէտք է լինի։

Հարստութիւնը, պատիւը, լաւ կեանքը նորա համար այն մեծ բաները չեն, որոց համար հոգի տար։ Բոլոր այս փառաւոր բաները, որ մարդս Աստուծոյ տեղ է պաշտում, քրիստոնեայ իմաստունի ոչ բաղդաւորութիւնն են աւելացնում, երբ որ ունենում է, եւ ոչ պակասեցնում, երբ որ ձեռքիցը գնում են։ Նա շատ լաւ է իմանում թէ՝ ի՞նչպէս անհատատ բան է աշխարհիս բաղդաւորութիւնը, ինչպէս անտոոգ ու կասկածելի է ուրիշների տուն երթալ պատիւ տալն՝ ում եւս որ տալիս են։ լաւ է հասկանում թէ, աշխարհիս ոսկին որչափ քիչ բան կարող է անել, երբ որ մարդիս սրտին մի տեւողական ուրախութիւն ու անվրդով հանգստութիւն պարգեւել չէ կարում։ Նա միշտ պատրաստ է ամենայն տեսակ փառքից ձեռք քաշելու, երբ որ փառքից իրան ղրկելովն, մարդկային ազդատոհմերի խաղաղութիւնը կարող է աւելացնել։ Ամեն ժամանակ պատրաստ է նա զոհելու ամեն հարստութիւն, եթէ միայն այդ զոհաբերութիւնովն հասարակաց քաշածներն կարող է թեթեւացնել, նոցա ունեցած ցաւերը պակասեցնել։

Նորա համար՝ ինչ որ հողինն է, հող պիտի դառնայ. ամենափառաւոր, ամենափայլուն բանն անգամ մի ակ քաշելու չարժէ։ Ո՞նչ կայ որ, եթէ մի բան որ՝ յետ ու յառաջ՝ կորցնելու ենք, ինչ եւս որ անելու լինինք, պիտի չկարողանանք պահել, կամ մի քանի օր ենք ունեցել, կամ մի քանի տարիներ, երբ որ ձեռքներիցս պէտք է գնայ, մեղ մնալու չէ, եթէ որ բանն այդպէս է, աւելի լաւ է այնպէս տեղ եւ այնպիսի բանի համար կորցնենք, քս մեր կարեւոտով մարդկութեան մի սուրբ

դործը յառաջանայ, մի մեծ կարիքը կատարուի։ Մի թագաւորական թագ մի Աստուածային մեծ գործ կատարած լինելու դիտակցութիւնից իւր մէջը հասկանալուց աւելի արժէք չունի, եւ անմեղութիւնը պահ բերելուց աւելի հեշտ է՞ կեանքը պահելը։

Ամեն իրաւունքները, որ մեր, կամ ուրիշները ունին քաղաքական հասարակութեան մէջ, պայմաններ են, որով մեք [օգտակար գործունէութիւնով կարողանանք շահուիլ, մեր գործունէութեանը ընթացք տալ եւ գործ դոյդ տալ։ Ո՛վ որ չարութիւնով, կամ սխալուելով, այս պայմանները քանդում է, կամ կակուղ, կամ կոշտ կերպով պիտի խրատուի եւ պարտաւորութիւնը ճանաչելու ստիպուի։ Մեք չարագործին՝ մարդկային ընկերութեան թշնամի ենք ասում, բայց քրիստոնեայն թշնամի ասած բանդ չունի։ Կարելի է որ՝ ի զուր տեղ խմաստուն քրիստոնեին արհամարհեն, առեն, հալածեն, կամ նախանձեն. բայց նա, իւր իրաւունքները պաշտպանելու միջոցին դարձեալ իւր հակառակորդի բարեկամն է։ Նա, նորա վերայ նեղանալով, նորանից չէ հեռանում, այլ պատուում է եւ օգնելու պատրաստ է, ուր որ կարող է պէտք գալ նորան։ Նորան լաւութիւն է անում երբ որ տեսնում է որ՝ մի յաջող դիպուած նորա առաջին մի լաւ ճանապարհ է բացել։ Եւ երբ որ վերջապէս նորան, իմաստուն քրիստոնէին երկու բանից մինն է միայն մնացել ընտրելու՝ կամ վատութիւն անել, կամ իրան վատութիւն անեն ու քաշի — նորա համար դժուար չէ քաշելը. ուրիշի իրան արած վատութիւնը նա քաշում է։

Նորա մէջն է աւելի եւ աւելի երեւում քրիստոնէի մեծանձնութիւնը (հոգու մեծութիւնն), որ նա մինչ դէպ ի մարդկութիւնը մեծ սէր ունի, Աստուծոյ նման. որ այս սէրը երբէք չէ կարվում նորա սրտից, ուրիշների անշնորհակալ ապերախտութիւնը տեսնելով, որ այս սէրը աւելի ճանաչվում է իւր գործերից, քան թէ խօսքերից։ Ամեն ժամանակ, ամեն մի գործում նա աշխատում է, որ ամենից օգտակար մարդն լինի, որքան որ ոյժը կպատի ու ձեռքիսը կգայ։ Եւ այս ամեն բանն անում է նա ծածուկ, որ չլինի թէ ուրիշի աչքին ընկնի ու տեսնելու համար արած լինի։ Բայց մարդոյ տեսնելուց եւս չէ քաշվում, երբ որ հաւատում է, որ իւր արածը լաւ ազդեցութիւն կունենայ։

Մի բարի գործ, որ գովասանք լսելու համար է միայն անվում, ազնիւ մարդի արհամարհանքին արժանի է։ Աստուած այդպիսի գործ չէ ընդունում։ Հոգւոյ իսկական մեծութեան, իսկ վեհանձնութեան կատարեալ վսեմութիւնը նորա մէջն է, որ ազնիւ հոգու տէր մարդն իւր նման մարդոց բաղդաւորութեան համար ամեն մի զոհաբերութիւնի պատրաստ է, բայց այնպէս է պահում իրան, որ ոչ ոք չհասկանայ իւր սրտինը։ Շատ անգամ ամօթալի է թւում, որ իւր պարտականութիւնները կատարելու համար իրան գովեմեն, ինչու որ այդ գովասանքը, նա պարզ տեսնում է, որ իրաւունք չունին իրան տալու այն մարդիկը, որոնք տալիս են։ Ինչու որ, եթէ մի մարդ գովեմէ այն, ինչ որ մարդս պարտականութիւնն է անելու, սորանով ցոյց է տալի իւր պակասութիւնը, որ իւր պարտականութիւնը յաւ չէ կատարում։ Այդպիսի մարդոց բերանից դուրս եկած գովասանքը ինչ դիւր պիտի գայ մեզ։

Եթէ որ առաքինի մարքի հետեւանքը մեծ անպատուութիւն եւս բերի, առաքինի մարդն այն ժամանակն եւս ինքն իրան մխիթարելը գիտէ։ Նորա հոգին ազատ է, այն նեղութիւնները, որ նորա մարմինն է քաշում, հոգուն ինչ վնաս կարող են տալ։ Նախանձի վերայ մեռնելը մի սուրբ գործի համար, կամ պատերազմի մէջ մեռնելը ինչ գանազանութիւն ունի հիւանդութեան անկողնումը մեռնելուցը։ Մինչեւ մի եւ նոյն բանը չէ մի հոգու համար, որ Աստուծոյ մէջ, Աստուծոյ համար եւ Աստուծոյ հետն է ապրում։ Ո՛րքան ազնիւ մարդիկ մեռան իւրեանց ժամանակակիցների անէծքը հետները տանելով, որոնց արժանացած չէին, բայց իւրեանց երախտագէտ յետնորդները արտասուքով օրհնելին նոցա յիշատակը։ Ոչ թէ այն բանը պէտք է մեզ անհանգիստ անի, թէ ինչպէս են ճանաչում մեզ, կամ ինչ կարծիք ունին մեր վերայ, այլ այն թէ, ինչ էնք մեք։ Ոչ թէ մարդոց մեր գործերի վերայ արած դատաստութիւնը, այլ միայն մեր ապագ գոյքն է մեր իսկական ու ամենագեղեցիկ սեպհականութիւնը։ Մեր արած գործը միայն ազդեցութիւն ունի մեր արժանաւորութեան, կատարելութեան ու երջանկութեան վերայ, իսկ մարդոց մեր գործերի վերայ տուած դատաստութիւնը հաղիւ թէ մի ապղեցութիւն ունենայ մեր հոգացած մարմնոյ վերայ, մեր գերեզմանի հողի վերայ։ Շատ չանցնիլ, գերեզմանի հո-

ղը կծածկվի թէ սպանողին եւ թէ սպանուողին ու երկուսն եւս հոգ կդառնան. բայց Աստուած անմահ է, նա կդատի։

Դու կենդանի ես Աստուածդ՝ յաւիտենական, այո, Դու դատաստան ես անում, արդար Դատաւոր։—Ի՞նչ է իմ անշունչ մարմինս, հոգիս փչելուցս յետոյ. իմ վրայիցս ընկած մի հագուստ։ Ի՞նչ է զգայական կեանքը. երբ որ վերջանում է։ Մի՝ երբեմն ուրախութիւններով լի, երբեմն եւս տանջանքներով լի երազ, որ մեր զարթնելուց յետոյ այժմն ու նշանակութիւնը կորչում է։ Միայն հոգու բարձրութիւնն ու զօրութիւնը մահուան ձեռքը չէ կարող ոչնչացնել, ինչու որ այս զօրութիւնն անցաւոր, հողեղէն չէ, մահուան ու հողի բաժին չի դառնալ՝ Աստուածային է ու անմահ։

Ջանալը Աստծոյ հետ միանալը մարդու կարողութիւնից վեր բան չէ, ինչու որ Քրիստոս եւս կատարեալ մարդ էր. նա ամենաբարձր բանն արաւ, որ ցոյց տայ թէ հաստատ կամքը՝ ամենակատարեալ բանին եւս կարող է հասնել։ Ինչի՞ համար ես եւս չպիտի կատարեմ այն, ինչ որ նա արաւ։ Եւ ինչի՞ համար պէտք է չկարողանամ այդ անել, թէեւ հպարտութ, թոյլ, անօրէն, խրեանց զգայականութեանը գերի եղած մարդիկ կասկածելու լինին թէ ինչպէս կարող եմ ես այդպիսի բան մտքիցս անցկացնել, որ ձեռքիցս գալու չէ, թէեւ այդ տեսակ մարդիկ ինձ յաւիտենական մարդ ասեն՝ անկարելի բանն՝ կարգից դուրս վատութ սրտով ու ոգեւորութիւնով կարելի եմ կարծում։ Աստուծոյ դատաստանին իմ սրտումն է. ուրեմն շահասիրութեան խոր ցեխի մէջ խրուած մարդոց դատողութիւնն ինչ նշանակութիւն ունի ինձ համար։ Եթէ որ նոքա ընդունակ չեն խրեանց հոգու կատարելութեան համար ամենայն բան յաւիտենականին զոհելու, ես ինչու համար պիտի ընդունակ չլինիմ։

Ա՛ղ իմ փրկիչ. պիտի լինիմ այնպէս, ինչպէս որ Դու ես։ Դո՛ւ ինձ իմ կեանք, ե՛ւ այն քաղաքակ իմ տեղ՝ ինձ շահ կլինի։

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ԱՆԿԵՂԾ ԳՈՐԾՈՂՆԵՐ

ԿԱՄ

ԴԻՄԱԿԱՒՈՐՆԵՐ.

Մեր՝ Հայ Ազգի մէջ կերեւին մարդիկ, զի երբեմն գիտակցաբար եւ շատ անգամ մարդամեքենայաբար այնպիսի ընթացք եւ գործողութիւնք կ'հնարեն՝ որ կարեկից եւ անկեղծ անձինք չեն կարող անտարբեր մնալ, երբ այնպիսի անձանց չանք եւ նպատակը թէեւ դիմակաւորեալ եւ պատրուակեալ՝ բայց անշուշտ կործանիչ եւ կորստաբեր հարուած կ'հշռեն եւ պիտի կշռեն մի ամբողջ Ազգի եւ Եկեղեցւոյ։

Սակայն երբեմն մտնաւորաց կամ բանիմաց անձանց անտարբեր չմնալով գործելն անգամ անբաւական կ'լինի օտարագործիք կամ մարդամեքենայից խարդաւանութիւնքը պարզապէս զգացնելոյ եւ ապարդիւն չեզոքացնելոյ համար՝ երբ բարձր դիրք՝ միջոց ունեցող եւ զօրաւոր օտար ձեռքեր կ'նիւթեն եւ կ'կառավարեն, եւ այն տեղն յայտնի վնասակար արդիւնքները պէտք է ապաշկեն ճշմարտութիւնը պարզապէս ակնյայտնի ցուցանելոյ համար, եւ միամիտ անձինք եւ հասարակութիւնք լոյս տուընջեան արեւու նման պայծ՝ եւ իւրեանց հոգւոյն եւ զգացմանց ուղղակի հարուածող գործերէ եւ արդիւնքներէ կարող են զգալ դիմակաւորաց նպատակին խոկութիւնը եւ յատկութիւնը։ Բայց շատ անգամ, այո՛ խիստ շատ անգամ այս տեսակ զգացումը եւ շարժումը շատ ուշ կ'լինի եւ առաջքը առնելոյ համար ի գործ դրուելիք միջոցներուն պա՞տ չան և անօգտա՞ վաստակ առածը անվրէպ կ'ստուգուի։

Այսպիսի անձինք եւ անդքեր երբէք պակասած չեն եւ ոչ կպակասին կամ պիտի պակասին ամեն կողմ եւ ամեն ազգայ մէջ, եւ յուսալ՝ որ երբէք չպատահ'ին, ի զուր եւ անկարելի է։ Սակայն այն տեղն մեղադրելի եւ անները'լի կ'լինի՝ երբ վարչական մարմիններ, բանիմաց անձինք եւ ողջամիտ հասարակութիւնք անտարբեր կ'նան այսպիսի թէ անձանց առջեւ եւ թէ անցիոյ մէջ, եւ չեն զինուիր եւ պնդեր վտանգին առաջքը

առնելոյ հետ՝ մինչեւ անգամ մոլորելոյ կամ օտարագործիք դիմակաւորուց գարձին եւ ուղղութեան հետամուտ լինել։

Եթէ տիտղոսահաճները բարեմիտ մրցումներ եւ բարենախանձ ջանքեր լինին, գարձեալ գովելի եւ խրախուսանաց արժանի են, եւ այս տեսակ մրցումները ոչ միայն օտարաց հետ, այլեւ մեր մէջ անհրաժեշտ են եւ օգտակար։

Սակայն դժուար չէ եւ պէտք է միշտ բարեմիտ եւ անկեղծ մրցումները եւ ջանքերը ճանաչել եւ որոշել չարամիտ եւ չարանենգատակ մրցումներէն եւ ջանքերէն, բաւական է՝ որ ուշադրութիւն եւ արթնութիւն լինի։

Արդարեւ շատ պէտք է դժուարանալ եւ մեծ վիշտ զգալ երբ Ազգի եւ եկեղեցւոյ մէջ գիտակցաբար կամ մարդամեքենայաբար օտար նպատակներով գործողներ կամ օտարագործիք անձինք գանուիլը կտեսնուին եւ կազդարարուին, մինչեւ անգամ հարկ էր աններելի համարել այն տեսակ կարծիքները, սակայն նայելով նոյա ուղղութեանց՝ արդեանց եւ յամառ դիմադրութեանց, պէտք է ասել՝ որ կամ խելացնորներ են եւ կոպտքեալ ապուշներ, եւ կամ գինեվաճառ եւլն գործողներ։

Իսկ երբ այնպիսի հաւաստիքներ եւ հաստատ տեղեկութիւնք եւս յառաջանեն օտար եւ համամիտ ուղղութեան եւ գործողութեանց վերաբերեալ, որպիսիք դժբաղդաբար ընդհանրութեան կամ աւելն մարդու մատչելի չեն լինիր եւ ոչ պարզ ասել կարելի է, այն աւելն երբէք կարելի չէ տարակուսել ակնարկեալ անձանց եւ ընթացից Հայոց աննպաստ եւ աւելի ճիշտը ասելով՝ վտանգաւոր հետեւանաց համար, թէպէտ եթէ ներելի լինէր աւելն քան պարզ ի պարզոյ խօսիլ եւ հաստատ... իրողութիւնք հրապարակել, վտանգակ վերայական տեսութեանց՝ գործնական եղանակաւ աւելի հեշտ էր համոզել մեր ազգայինքը եւ այնպէս զգուշացնել։

Բայց եւ այնպէս՝ որքան հնարաւոր է՝ գարձեալ մի քանի կէտերով պարզեմք մեր նպատակը։

Առանց հեռաւոր տեղերում դեգերուելոյ, նոյն իսկ մեր մերձակայքում դիտեմք եւ կտեսնեմք, որ արդարեւ կան մեր Ազգի մէջ մարդիկ, որ ազգային վերակենդանութեան եւ համազգային միութեան դրօշակ պարզել հռչակելով՝ (երբ քաղաքական հարցաւոր կէտերն եւ մարմին չկայ ըստ քաղաքականին միանալոյ

եւ գործելոյ համար,) շարունակ կջանան յարձակողական ուղղութեամբ բան գործ անել եւ կրծնը ծաղրել եւ առ ոչինչ համարել, Հայաստանեայց առաքելական նուիրական եկեղեցւոյ պաշտպաւոր անուանել եւ մի ամբողջ Ազգ վիրաւորել, Ազգային — Կրօնական իշխանութիւնքը շարունակ պախարակել եւ գայթակղական՝ հնարովի եւ նպատակաւոր տարաձայնութեամբք ազգայինքը վհատեցնել, նուիրական կարգ եւ կանոնները խանգարել մինչեւ անգամ խոպառ եղծել, ստորագրեալները գրգռել եւ գլխահան անել կամ պնդնապանդութեան հրապուրել, հայ հարազատ գպրոցները աննպատակ եւ վնասակար հըռչակել՝ յորդորելով արտօնաւորեալ եւլն. գպրոցայ յաճախել, նուիրական անձինքը եւ բարձրաստիճան պաշտօնեայքը անհիմն լուրերով եւ սոսկալի զրպարտութեամբք անընդհատ անուանարկել եւ միամիտները յուսահատեցնել, ազգային նուիրական հաստատութիւնքը եւ յատկապէս Ս. Էջմիածինը հարուածել երեւակայել եւ նոցա դէմ շարունակ աննպատակ տարաձայնութիւնք հնարել, նոցա անուամբ եղած նուիրահաւաքութիւնները եւ կտակները պախարակել եւ կտակարարները վշտացնել, ազգային բարերարաց նկատմամբ զրպարտութիւնք հնարել եւ նոցա եռանդը հարուածել, ազգային — հայկական ընկերութիւնքը անխոհեմ հալածել կամ խանգարել գայթակղական լուրեր ցրուելով եւ ազգայնոց վստահութիւնքը եւ ակնկալութիւնքը սառեցնելով, ազգային — հայկական գպրոցաց նկատմամբ դաւաճանի եւ մատնչի յատուկ ուղղութեամբ տեղեկութիւնք հրաւիրել, հայկական ձայնագրութիւնը թուղած՝ օտար գպրոցի վրչ օտար ձայնագրութիւն եւ երաժշտութիւն ուսանելոյ հրաւիրել եւ վերջապէս ինչ որ օտարաց անյագ եւ վերջնական նպատակ եւ ջանքն է, գիշեր եւ ցերեկ ակնել արդիւնաւորելոյ համար, իւմիւեանց բաժանելով, միմեանց դէմ գրգռելով, առհասարակ հիմն իւրեր տապալելով, յուսահատեցնելով եւ օտար նպատակներուն իւմի ձուլելով եւլն*):

(*) Ա յս համառօտագոյն ընթացքն մասնչի հետ պէտք է խոստովանիլ, զի երբեմն կարեւոր եւ օգտակար տեսութիւններ եւ արդիւնքներ ևս կարտազրեն, զորս ժեծագոյն չափով առջեւ անշուշտ բարեխ համարիլ միայն կարելի է,

Ահաւասիկ այսպիսի մրցումները եւ գործող անձինքը սրոշել եւ իմանալ դժուար է, նոցա գործքերը արժանի՞ են բարի եւ վատի կարծեաց, հետեւաբար ապնե- եւ յառաջդիմական լինել կարծել եւ հռչակել ներելի է։

Արդարեւ կարելի էր դարձեալ այս ամենը ազատ մամլոյ ազատ քննադատութիւն անուանել եւ հաւատալ, եթէ անկեղծութեամբ՝ առանց չար կրից եւ ատելութեան՝ եւ առանց չար նպատակի՝ բարեկամաբար եւ սիրայորդոր եռանդեամբ արտայայտուէին։

Կարելի էր նաեւ առարկել անձնապաշտաբար եւ հպարտանելեաբար գործուիլը, բայց արդիւնաւորեալ եւ արդիւնաւորելիք վնասն եւ վատնդն իրաւունք չեն տար արդարացնել այս կարծիքը եւս։

Արդ այս տեսակ ջանքեր եւ նպատակներ մի՛ր կասնին եւ կյանգին։

Աւելի մանրամասնելոյ կարօտութիւնք չեն տեսնուիր՝ ցորչափ գործերը լինքնին պարզ են եւ գործողները այլ եւս չեն կարալ թաքցնել իւրեանց ուղղութիւնքը եւ արդիւնքները։

Եզրակացնեմք։

Եթէ գործողները իրաւի անկեղծ մարդիկ լինին եւ անկեղծ նպատակ ունենան, անշուշտ կղգան եւ պիտի ղգան իւրեանց մոլորութիւնքը եւ սխալները այլ եւս բաւական համարելով ծիքան խաբուեցան մանաւանդ վերջին մի քանի տարիներու մէջ, գայթակղեցան եւ գայթակղեցուցին, եւ երեւակայական խոստումներով այն հետեւանքը արդիւնաւորեցին՝ որ այսուհետեւ անձնանուէր եւ անկեղծ անձանց անգամ դժուար պիտի հաւատան մեր ազգայինք՝ թէեւ խաբուող վիճակները երբէք պակաս չեն լինիր։

Արդ այն նպատակը եւ ձգտումն՝ որ Հայոց համար հանրաբաղձալի եւ ներկայիս անհրաժեշտ պէտքն է՝ եթէ գիտնամք եւ այնպէս գործեմք՝ — առանց թմբուկներ զարնելոյ, առանց գոռում-գոչումներ՝ վիճառասիրական եւ անապարճական վիճակութիւններ վարձելոյ, վերջապէս լռիկ մնջիկ եւ շարունակ, — մեծ առաքինութիւն է եւ գովելի։

Պէտք չէ այս եւ այն անձի հարստութենէն՝ դիրքէն եւ դանազան հրապուրիչ խոստումներէն խաբուիլ եւ խաբել ազգը՝

քաջ գիտնալով՝ որ վնասը եւ վտանգը մի կամ մի քանի անհատի վերայ միայն ծանրանալով չվերջանար։

Իսկ եթէ չեն զգաստանար եւ չեն ուղղուիր՝ արգիւնքները շարունակ կաղաղակեն եւ կըսղոքեն՝ որ մեր մէջ խլրատ ինքնակոչ պէնի- եւ յոռաջըխնամանները անկեղծ գործողներ չեն, եւ պարզապէս դիմակներ հագած պաշտօններ ստանձնած են կառավարելոյ համար, ուստի քանիմոյ անձանց անհրաժեշտ պարտք կայ կարեկցել եւ անտարբեր չմնալ լինչ դիրքում եւս գտնուին, եւ նոցա վատ գործերը ամեն տեղ հռչակել՝ որ մեր աղգայինք զգուշանան՝ շարունակ խայտառակելով եւ հալածելով դաւադիրները, որք մեզ համար օտարազգի քարոզիչներէն՝ նզովիտաններէն եւ ամեն տեսակ թշնամիներէն աւելի վտանգաւոր եւ վնասակար են եւ պիտի լինին։

Վ.Ե.Մ.

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ.

(Շարունակ. Աբբաթ, թ՛ո Ը. Բ.)

ԱՐՄԱՏ.

Սերմի կազմութիւնը ուսումնասիրելուց յետոյ եւ նորա աճման գնացքի հետ ծանօթանալուց յետոյ, քննենք այժմ բոյսի գլխաւոր մասերի կարեւոր փոփոխութիւնները։

Քննելով սերմերի աճումն մենք նկատում ենք, որ երկշաքլաւոր բոյսերից շատերի սաղմի արմատիկը երկարանում է, հաստանում եւ ճիւղաւորւում է եւ արմատ (корень) է փոխւում։ Միաշաքլաւոր բոյսերի արմատիկը սովորաբար չարգանում չէ, այլ նորա տեղը մի քանի պտուկներ են երեւում, որոնցից արմատիկներ են դուրս գալիս։ Առաջին դէպքում արմատը գլխաւոր (главный) է կոչվում, իսկ երկրորդ դէպքում ժանդակ (придаточный) է ասւում։

Ժանդակ արմատները առհասարակ բաղկացած են անթիւ արմատիկներից, որոնք մօտաւորապէս լինում են միեւնոյն երկարութեամբ եւ միեւնոյն լայնութեամբ։ Այս տեսակ արմատը կաճին (мочковатый) է կոչւում։ Եթէ արմատի թելիկներից մի քանիսը հաստանում են, եւ նայելով թէ նորա չրջափ են հաստացած լինում, կոչւում են խրձաձեւ (пучковатый) կամ թաղտային (шишковатый)։

Իւրաքանչիւր արմատի թելիկների ծայրը հագնուած է մանր թեքեալ խոշերից կազմուած պահպանակով (чехликъ)։ Պահպանակի

Ներսը գտանւում է աւելի պինդ խորշերից զանգւած, որը աճման կէտն (точка роста) է կազմում։ Պահպանակը միշտ ներսը՝ աճման կէտից վերանորոգւում է, և քանի որ պահպանակի արտաքին շերտերը հողի մէջ անցնելով մաշւում և թառամւում են նոքա անդադար զետեղւում են աճման կէտից առաջացած նոր շերտերով, որոնք նմանապէս ժամանակին մեռանում են և կրկին զետեղւում են նոր շերտերով և այս շարունակւում է քանի որ արմատիկը կենդանի է։

Արմատների ճիւղերը երկարելով, աւելի և աւելի ճիւղաւորւում են մանր արմատների և արմատիկների, և այս կերպով արմատի հողի հետ հաղորդող մակերևոյթը մեծանում է, որով և հողի խոնաւութիւնը արագ է ընդունւում։ Արմատների թարմ մասերի վերայ բաւականի շատ են գտանում արմատի թելիկներ, որոնցով արմատի հողի հետ հաղորդող մակերևոյթը աւելի ևս մեծանում։ Այդ թելիկներով է արմատը հողից կերակուր ընդունում և ոչ թէ աճման կէտով։

Արմատի տարածման վերայ մեծ ազդեցութիւն ունի և տեղը, որի մէջ ամրացած է արմատը։ Եթէ արմատները պարարտ հողի մէջ են գտանւում, լինում են կարճ և բազմաթիւ ճիւղերով։ Իսկ ուր կերակուրը սակաւ է գտանում, արմատները երկար և բարակ են լինում։ Արմատի թելիկները աւելի շատ են լինում նիհար հողի մէջ գտնւած արմատի վերայ և աւելի են լինում պինդ և անթափանցիկ մակերևոյթ ունեցող արմատի վերայ։

Սովորաբար արմատները միայն հողից կերակուր ընդունելու համար են ծառայում, և դորա համար մեծաւ մասամբ չեն հաստանում այլ աւելի ճիւղաւորւում են, բայց երկամեայ և բազմամեայ խոտերի արմատը, այլ նպատակներին ևս ծառայում է։

Այդ բոյսերի արմատը ամառուայ միջոցին կերակրի պահարան է դառնում, և պաշարները ընդունելով մեծանում և հաստանում է։ Այդ տեսակ արմատները մսալից (мясистый) են կոչւում և ձևով լինում են կոնաձև (коническій), շաղկամաձև (рѣпчатый), իլիկաձև (веретенообразный), թաղտաձև (шишковатый)։

Երկամեայ բոյսերը (գազար, շաղգամ, բազուկ) հողի վերայ խրձանման տերևներ են առաջացնում, առաջին ամառ ժամանակ կերակուր են հաւաքում, պաշար են պատրաստում մեծ արմատի մէջ, որը ձմեռն անցնում է, և հետևեալ տարին այդ կերակրի հաշւով նոր շառաւիղներ է աճեցնում, առաջանում են ծաղիկներ և սերմերի հետ միասին պտուղներ, ծաղկելու միջոցին կերակրի բոլոր պաշարն ծախսելով բոյսը թառամում է։

Բոյսերից շատերը արմատներ տալու մեծ ձգտումն ունին, մինչև անգամ նոցա արմատները սկսւում են գողունի վերայ մի քանի դիւմ հողից բարձր։ Այդ տեսակ արմատներին օդային (воздушные) են անուանում։

Օդային արմատներով բոյսերը առաւելապէս տաք և խոնաւ երկրնե-

բուճճ են գտնուում, ուրկից շատ անտառոտ տեղերում, ուր արդեական լոյսը քիչ է թափանցում։

ՑՈՂՈՒՆ։

Ցողունը՝ սաղմի փետուրիկի երկարանալուցն է կազմուում։ Նորա վերայ տերևներ, պտուկներ և ծաղիկներ են բուսանում և նորա միջով է տարածուում արմատով ընդունուած ջուրը, և տերևների մէջ առաջացած օդը։ Սովորաբար ցողունը ուղղուում է դէպի արեգական լոյսը, բայց ոչ միշտ։ Գտանուում են հողի մէջ հորիզոնական ուղղութեամբ ցողուններ, որոնք հորիզոնական ճիւղեր են տալիս։

Երբեմն այդ տեսակ ցողունները սխալմամբ արմատ տեղ են ընդունուում, որից զանազանուում են թէ աճելու եղանակով և նմանապէս նորանով որ հողի մէջ գտնուած ցողունի վերայ պտուկներ և տերևներ են առաջանում, իսկ արմատի վերայ դրա չեն լինում։

Բոլորովին զարգացած ցողունը կարող է հասարակ լինել (արմատներից շատերը) կամ ճիւղաւոր։ Նա ունի կապեր (узелъ) և միջնակապեր (междоузлье)։ Կապ տեսում է ցողունի կամ նորա ճիւղերի այն տեղը, որի միջից տերև է բուսանում, իսկ երկու կապերի մէջ եղած միջոցը միջնակապ կամ ծունկ է կոչուում։ Շատ բոյսերի կապերը փքուած են (օրինակ արմատ)։ Արմունկների միջնակապերը գաղարկ են, իսկ կապերը անընդհատ։

Բոլորը բոյսերի ցողունը ուղղականգէ, այսինքն հիմքից ուղղահայեաց է բարձրանում, շատերի հիմքը հողի մէջ է գտանուում, իսկ յետոյ բարձրանում, միւսներինը ուղղականգ է, բայց թեքուած ծայրով. երրորդները բոլոր ցողունը հողի վերայ պառկած է լինում, վերջապէս մի քանի բոյսերի ցողունը փաթաթուում է բոլորի շուրջ առարկաների չորս կողմը, այդ տեսակ ցողունին փաթաթող (вьющійся) են ասում։

Ստորերկրեայ ցողունները երեք տեսակ են լինում՝ տակուիք (корневище), պալար (клубень), և սոխ (луковице)։

Տակուիքը ստորերկրեայ ցողունի ամենահասարակ ձևն է ներկայացնում և հողի վերայ գտնուած ցողունից գլխաւորապէս նորանով է զանազանուում որ բուսանում է հողի տակ հորիզոնական ուղղութեամբ։ Տակուիքն իսկապէս ցողուն է և ոչ թէ արմատ, այդ երեւում է նորա բուսանելու եղանակի մէջ և նորա մէջ, որ տակուիքը ևս բաղկացած է ծունկերի կարգերից (միջնակապեր) իրարանձիւր կապի վերայ մանր թեփերի նման տերևներ են երևում, այնպիսի տերևներ, որոնք հողից դուրս գտնուած ցողունի վերայ ևս՝ բուսնում են (հողի մօտ)։ Տակուիքը, ինչպէս և միւս ցողունները իւր թեփերի ծոցերի մէջ պտուկներ է առաջացնում, իսկ արմատների վերայ չեն առաջանում ոչ պտուկներ և ոչ տերևներ։ Տակուիքի վերայ արմատներ են ևս զարգանում, որոնք ուղղուում են հողի մէջ։

Այդ տեսակ ստորերկրեայ ցողուններով մասնակարուած բոյսերը շատ արագ բուսնում են և երբեմն հողագործին շատ ձեռս են տալիս։ Տակ-

ուիքը ձմեռն անցնում են և մատակարարուած են լինում իւրաքանչիւր կապի վերայ պտուկներով։ Այդ պտուկներից մի քանիսը գարնան ժամանակ բարձրանում են հողից դուրս ուղղականգ ցոլուն են դառնում, տերևներ են ստանում հողից ընդունած պաշարը մշակելու համար, ծաղիկներ են ունենում սերմեր տալու համար։ Իսկ միւս պտուկները վերից պատրաստ կերակուր ստանալով նոր ստորերկրեայ շառաւիղներ են թողնում։ Երբ ստորերկրեայ ճիւղերը թուով բազմանում են մի ամրողջ լիմիան կազմող հին ծառնկերը տարեց տարի մեռանում են, իսկ արմատացուցանել կողմնական ճիւղերը ազատւում են և անկախ բոյսեր են դառնում։

Պալարը (клубень) ինքն ըստ ինքեան հաստացած տակուիքի մասն է, օրինակ կարելի է վերցնել կարտօֆիլը (картофель) ստորերկրեայ ցողունները իւր պալարներով։ Պալարների վերայ թեփեր են նկատւում, իսկ թեփերի տակ աչքերն (глазки) են գտանւում, այդ աչքերն իսկ և իսկ պտուկներն են ներկայացնում։ կարտօֆիլը երեք տեսակ ճիւղեր ունի 1) մի տեսակ ճիւղերը տերևներով են օրոնք օդից և արմատով հողից ընդունուած նիւթերն մշակում են և անդադար նիւթերի են դարձնում։ 2) երկրորդ տեսակ բոյսի ծայրում գտնուած ճիւղերն ծաղիկներ են տալիս, որոնք տերևներով պատրաստուած սննդարար նիւթից պտուղ և սերմեր են կազմում։ 3) բայց սննդարար նիւթերից մեծ մասը վար է իջնում և հողի տակ սիրուած երրորդ տեսակ ճիւղերի վերջերումն իրրև օսլայ հաւաքւում է և պալար կամ պինդ կերակրի պաշարանոց է դառնում։ Այդ տեսակ կերակրի պաշարի նշանակութիւնը հասկանալի է։ Աշնան ժամանակ բոլոր բոյսը, բացի սերմերը (եթէ ապաղացած են) և պալարները մեռանում է, պալարները հողի մէջ առանձնացած են լինում։ Ինչպէս որ սերմի մէջ գտնուած փոքրիկ քանակութեամբ կերակուրը սնունդ է տալիս սաղմին իւր աճելու ժամանակ, այնպէս և պալարների մէջ գտնուած աւելի շատ քանակութեամբ սննդարար նիւթերը, սնունդ են տալիս պտուկներին, երբ հետևեալ գարնան ժամանակ նոցանից նոր բոյսեր են զարգանում։

Ստորերկրեայ բոյսերի զանազան տեսակները միմեանց հետ կապուած են լինում բազմաթիւ փոփոխական ձևերով։ Մենք վերը տեսանք թէ որքան մեծ յարաբերութիւն ունին պալարը և տակուիքը։ Տակուիքը կարող են շատ տարբեր ձևերով լինել։ Նոքա լինում են զարգացած կամ չզարգացած ծառնկերով, ապա ուրեմն երկար (листовая вѣтреница), կամ կարճ հաստաբուն կամ ճիւղաւորուած, բարակ կամ հաստ, կարող են թիկանման տերևներով խիտ սիրուած լինել կամ համարեա մերկ, կարող են իւրեանց բոլոր մակերևոյթից արմատներ թողնել միայն կամ կապերից և վարից։

Երբեմն տակուիքը այնքան հաստ ու կարճ են լինում, որ սոխի նմանութիւն են ստանում, այդ տեսակ տակուիքին ուսումնական սոխ

կամ ուղղակի ուռուցք (шишкообразная луковица или шишка) են անուանում, իրրև օրինակ կարելի է բերել քրքում (шафранъ сатранъ) ուռուցքը։

Սոխը (луковица) կարճ ստորերկրեայ ցողուն է ներկայացնում, վարից արմատներ է արձակում և սիուռուած է լինում հաստ թևքանման տերևներով։ Այդ միևնոյն վերնիշեալ ուռուցքն է միայն աւելի շատ տերևներով, որոնք սոխի գլխաւոր զանգուածն են կազմում։

Սոխերը միևնոյն նպատակին են ծառայում, ինչպէս և պալարները և տակդիքը։ Գլխաւորապէս զանազանւում են նորանով որ տակդիքի և պալարների ապագայ աճման կերակրի պաշարը հաւաքւում է ցողունի մէջ, իսկ սոխի կերակրի մեծ մասը հաւաքւում է տերևների սկզբում, որոնք հաստ թևիանման ձև են ստանում մինը միւսին ծածկելով, որով հետև ցողունի ծուկերը չեն զարգանում։

Սոխի թևիերը՝ ճշմարիտ որ տերևների սկիզբն են ներկայացնում, այդ բանին համոզուելու համար, բաւական է միայն հետազօտել տերևների վարի մասն մինչև նոցա սկիզբն սոխի մէջ։ Իրաքանչիւր սոխի տերև իւր դերը կատարելուց յետ թառամում է մինչև հաստ հիմքը, որը թևիփի նման մնում է սոխի վերայ։

Մինչև այժմ մենք պատմեցինք ստորերկրեայ ցողուննների զանազան ձևերը, ցոյց տալով նոցա տարբերութիւնը և նմանութիւնը։ Հողի վերայ գտնուած ցողուննները ևս տարբեր են լինում։

Բոլոր այդ ձևերի վերայ խօսելն առ այժմ թողնելով, վերցնենք հընդկաթզենին (кактусъ) իրրև օրինակ թէ ինչպիսի ձևով կարող է ևս լինել վերերկրեայ ցողունը։ Մենք նկատում ենք որ սովորական բոյսերից շատերը, ունին ձգտողութիւն լոյսի աղբիւրութեան տակ եղած մակերևոյթը աւելի լայնացնել, իսկ հնդկաթզենուները հակառակն ենք տեսնում, նորա մակերևոյթը ամենափոքր է։ Այդ տեսակ բոյսերը շոր երկրներում յարմարուցած են ածելու համար, այդ պատճառու նոքա շոր երկրներումն են գտանւում։

(Շարունակելի)

Գ. Տ. Գ.

ՊԱՐՏԻԶԳԱՆ ԵՒ ԳԱՐՈՒՆ։

Պարպեզպան.

Ահա եկաւ գարունն՝ վշտերս նորոգուեց,
Վիրաւոր սրտիս մէջ՝ սոխակս յիշուեց,
Գարունը ինձ համար ոչինչ համարուեց.
Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ։

Թռչնոց երամներըն ուրախ երգերով
Շրայնում՝ աչեր՝ սիրոյ պարերով.
Քանի որ իմ սիրտս լի է վէրքերով՝
Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ։

Ճռուողուն թռչուններ արգաբեւ շատ կան,
Իսկ ես իմ սրտիս մէջ՝ սիրեցի նորան.
Գարունը ինձ համար վոխուել է ձմրան.
Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ։

Անեն սէր, խնդութիւն՝ ոչինչ է, ունայն.
Չկայ ինձ բերկրութիւն՝ սրքան եմ վիայն.
Կորուսել եմ սոխակս, չկը նորա նմանն.
Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ։

Որոնում եմ հարցնում, ո՞ւր է սոխակս.
Տատնամեայ կեանքիս մէջ այն էր վաստակս.
Թէ շուտով չի գտնեմ՝ կանցնի հասակս.
Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ։

Գալուն.

Ի զուր մ՝ արտասուեր, պարտիզպան ներսէս,
Թերեւս քիչ օրից՝ նորան կ՝տեսնես.
Յայնժամ լի խնդութեամբ՝ դու պիտի երգես,
«Ինձ համար է այս գարունը, սոխակս եկաւ»։

Գրաշար Նէրսէս Մախիթարեան.

Ս. Էջմիածնի տպարանում.

ԱՋԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՆԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ.

Հաւատացեալք Քրիստոսի, մեր Փրկիչը մարդկան փրկութեան մեծ գործը ի գլուխ տարաւ փառաւոր յաղթանակաւ, յաղթեց աշխարհի իշխանութեանը, առ ոտն կոխեց մեղքերի ամեն տեսակները, հարթեց մեր յառաջ առաքինութեան, բարեգործութեան եւ Աբքայութեան ճանապարհը, խորտակեց մարդկութեան վերայ բռնացող յաւիտենական մահու եղջիւրները եւ աստուածային փառօք յարեաւ ի մեռելոց Իւր յարութիւնը մեր հաւատացեալներիս նոյնօրինակ յարութեան անսուտ առհաւատչեայ պարգեւելով։ Նորա ամբողջ երկրաւոր կեանքը մի երկունք, պատրաստութիւն էր մեր ամենիս փրկութեան, մեր կեանքը եւս թող երկունք ու պատրաստութիւն լինի մեր սեպհական փրկութեան։ Յիսուսի յարութիւնը աւետող երկնային հրեշտակի ձայնը թող յարուցանէ եւ մեզ մեր բարոյական մեռելութիւնից. լցնէ մեր սրտերը Յիսուսի եւ ընկերի սիրով, դինէ մեր հոգին մեր յարութեան եւ երանական կենաց վայելման յուսով ու հաւատով, որով կարող լինինք մեր քրիստոնէավայել առաքինութիւններով ու բարի գործերով յաղթանակել աշխարհի եւ նորա ամեն հոգեկորոյս մեղքերի ու հրապուրանքների վերայ ու մեր հոգեբուխ գոհութեան, փառաբանութեան եւ աղօթից անուշահոտ խունկով պատրաստուինք տօնելու Փրկչի աստուածային յարութիւնը, յաւիտենական կենաց մէջ Նորան փառակից լինելու կենդանի յուսով ու հաւատով։

ՀԱՑ ԲԵԹՆԱԿՐԻ ՁԱՏԻԿԸ.

Քանի տարի է, որ իմ քաղցր ամուսին
Անուշ, ժանրիկ զաւակներուս հետ մէկ տեղ
Քաղցած, ծարաւ թողեր մեր տուն մեր երկիր,
Պանդխտութեան մէջ կտանջուիմ ես այստեղ։

Իմ հայ՝ մխիթր, ջուրն չեզի է փոխուել,
Արտասուելէս աչքերուս լայն է քաղուել
Ջօր ու գիշեր ծանր բեռներ կրելէս
Մէջքս ծռեր, խոպառ կմախք եմ դարձել։

Բայց դեռ նդյնն եմ, նոյն բեռնակիրն եմ ազգաս,
Մերկ ու քաղցած գիմ կեանք կողմամ յուսահատ,
Իմ բաղդակից շատ մի անսիրտ հայ մարդիկ
Կուգան կասեն «շնորհաւոր քո զաւիկ»։

Ա՛յ, ախ հայեր, մենք մեր զաւիկ կաօնենք,
Երբ այսպէս լուծ մեր վզէն կթափենք,
Եւ ֆնդուխամբ մէկ մէկու ձեռք պարզելով՝
«Այսօր ահա զաւիկ Տեառն է» կգոչենք։

Այո՛, մենք մեր զաւիկն այնօր կաօնենք,
Երբ ազատուած մեզմէ մարմնոյ վշտերէն,
Ցուպ ի ձեռին՝ ուրախ կընկնենք ճանապարհ
Դէպ այն երկիր, ուր պապերնուս կան նշխարք։

Այո՛, մենք մեր զաւիկն այնօր կաօնենք,
Երբ օտարաց դրանն ապրելէ կգադրենք.
Երբ մեր ձեռքով Հայոց երկիր կհերկենք,
Անով կապրինք, անոր մէջ ալ կմեռնենք։

Այո՛, մենք մեր զաւիկն այնօր կաօնենք,
Երբ մեր զաւկաց, մեր ամուսնուն հետ մէկ տեղ
Մեր պապերուս օճախներուն մէջ ժողուած,
Մեր քրտինքով վաստակած կուտենք հալալ հաց։

Այո՛, մենք մեր զաւիկն այնօր կաօնենք,
Երբ կշատնան մեր մէջ բարի հարուստներ,
Որ մեր ձեռք այժ՝ և մեր զաւկաց՝ գիր, ուսում
Տալու համար չխնայեն արծաթներ։

Այո՛, մենք մեր զաւիկն այնօր կաօնենք,
Երբ կշատնան մեր քաջ, արթուն հովիւներ,
Որ Հայոց սուրբ եկեղեցւոյն չեն թողներ,
Որ ձեռք զարնեն մեզ պոռոտող ջոջ ֆայլէք։

Այո՛, այնօր «շնորհաւոր մեր զաւիկ»
Կարենք ասել մենք մէկ մէկու ֆնդագին,
Այո՛, այնօր հայրը որդուն՝ որդին մօր,
Եղբայր եղբօր զաւիկ կարդայ շնորհաւոր։

Սիւթ։

Փետրվարի 4 ին ընտ սովորութեան վայելուչ հանդիսիւ տանուէցաւ Մայր Աթոռումն Ս. Վարդանանց տօնը. Ս. Պատարագից յետոյ կատարեցաւ Ս. Նահատակաց Հոգեհանդիստ։

Մխաբանից սեղանատանը ակնդեցականաց և աշխարհականաց խառն բազմութեամբ հանէստ ուրախութիւն և շատ մի ազգային բարեմաղթութիւններ եղան Ծառանգ. Ուսումնարանի աշակերտաց ախորժ երգեցողութեամբ։

Սոյնատեսակ հանդէս տեղի ունեցաւ թէ՛ Ճաշին և թէ՛ երեկոյեան Գ. ՃեմարանումՊ. Տեսչի և ուսուցչաց մասնակցութեամբ՝ ըրականական — երեկոյի և երգահանդէս ևս կատարելով։

***

Ա՛յլ և այլ քաղաքներից և գիւղերից խմբագրութիւնս այս տարի ունելի քան միւս տարիներում՝ ստացաւ գրութիւններ, որովք նկարագրուած իւրեանց մէջ պարագներում ևն. կատարուած Ս. Վարդանանց տօնի հանդէսը։ Մխիթարական է, որ տարէցտարի աւելանում այսպիսի նշանաւոր և յարգանաց արժանի Ազգի և Եկեղեցւոյ Բարերարաց յիշատակը կատարելու անհրաժեշտութիւնը զգացող հայ հասարակութեանց թիւը ցանկալի էր, որ առանց բացառութեան ամենայն հայաբնակ տեղերում ընդհանրապար այս գեղեցիկ սովորութիւնը։

***

Ազգիս Վեհ. Հայրապետի հրամանաւ Մայր Աթոռոյս Վանքական — Տնտեսական կառավարութեան Անգամք նշանակեցան ներկայ 1882 թուականի համար Գեր. Մեսրովբ Եպիսկոպոս Սմբատեանց, Գրիգոր Եպիսկոպոս Տէր Մատթէոսեանց, և Բարեշն. Ծովհաննէս վարդապետ Տէր Ծարուխիւնեան Տաթևացի և Գրիգորիս վարդապետ Տէր Ծակովբեան Սամաղարցի։

***

Ազգիս Վեհ. Հայրապետի հրամանաւ Բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանց նշանակեցաւ Փօքր ոյ Հայոց Վիճակին փոխանորդ։ Ծուսով եմք, որ յիշեալ վարդապետն իւր խոհական և եռանդուն գործունէութեամբ կարդիւնաւորէ իւր ստանձնած վսեմ պաշտօնը, որ աւելի կարևոր և նկատելի է մանաւանդ Փօքրոյ Վիճակում։

***

Խմբագրութիւնս ստացաւ այժմ դադարեալ «Փորձ» խմբագիր պ. Արտաշ Ծովհաննիսեանցի խմբագրութեամբ Տփխիսում նոր հրատարակուող «Գրականական և Քաղաքական Աբչ-ֆան» շաբաթաթերթերի առաջին համարը։ Սորա թէ՛ թուղթը և թէ՛ տպագրութիւնը մաքուր են ըստ բաւականին։ Սորանում ի լոյս ընծայուած նպատակայարմար նիւթերի ճաշակաւոր ընտրութիւնը, նորա բռնած ուղղութիւնը և մանաւանդ նորա խմբագրին անցեալ տարիներում հրատարակած «Փորձ» ամսաթերթի մէջ ցոյց տուած

ու փորձով ապացուցած յաջողութիւնն ու ապրիւնաւորութիւնը տեղիք են տալիս մեզ յուսալ, որ պ. Խմբագիր — հրատարակիչը իր այս նոր հրատարակութեամբը ևս հայ Ազգի և Եկեղեցւոյ իսկական շահուց անաչառ և խոհական ջերմ պաշտպան կհանդիսանայ։ Այս ակնկալութեամբ ահա շնորհաւորելով Աբյ-Ֆռնէի հրատարակութիւնը՝ կայանկամք Մեծ։ Խմբագրին տակաւն գործունէութիւն և կատարեալ յաջողութիւն։

Տպն շարաթաթերթը կբաղկանայ քառասաճալ վերջով 16 երեսներէ և տարեկան գինն է 5 ռ։

ԳՐԱՔՆՆԱԿԱՆ։

Հայ լեզուի ինքնակոչ քաքնոքսէլ Պ. Գ. Արծրունի, որ ամեն առիթի մէջ լեզուի վերանորոգութիւ կքարոզէ, իրրև օրինակ իւր ընտիր հայկաբանութեան և իրր ճաշակ իւր քարոզած լեզուի բարենորոգման, Մշակի վերջին մի քանի թուհամարների մէջ իւր հրատարակած հետևեալ նախադասութիւններն կներկայացնենք ընթերցողաց։

«ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 5 Մարտի։ Պրօֆէսօր Բուտլերով ստացաւ համակրական նամակներ Վարշաւիայի Համալսարանի 28 Պրօֆէսօրներից ակադեմեան մերկացնելուն պատճառով»։ Մշակ № 40։

Մշակ, որ 11 տարիէ ի վեր ռուսերէնէ հայերէն կթարգմանէ, կերևի թէ տակաւին չէ ուսած որ լաւ ֆրանսոլէն ասածդ՝ պէտք է լինի այնպէս՝ ուր շփոթի իմաստ կամ երկմտութեան ենթակայ մի խօսք չգտնուի, մինչև վերոյիշեալ թարգմանութեան մէջ՝ յայտնի չէ թէ, Պրօֆէսօր Բուտլերով համակրական նամակներ ստացեր է՝ Ակադեմեան այդ Վարշաւիայի 28 Պրօֆէսօրներիցը մերկացնելուն պատճառաւը, թէ այդ Վարշաւիայի 28 Պրօֆէսօրներէն համակրական նամակներ է ստացել Ակադեմեան մերկացնելուն պատճառաւը։ Երկրորդ՝ անհասկանալի է նաև թէ ի՞նչ կնշանակէ Ակադեմեան ձերկացնել։ Պրօֆէսօր Բուտլերով արդեօք Ակադեմեան կողոպտե՞լ է զայն մերկացնելով, թէ կեղտոտած լինելուն համար բազնիք տարեր ու զայն լուալու համար մերկացուցել է։ Հայերէնի մէջ արդեօք ռուսերէն բառին իմաստին աւելի ճիշտ համապատասխանող ուրիշ բառ մը չէր կարելի գտնել ու գնել փոխանակ «մերկացնել» բառին, Ակադեմեային հետ միատեղ՝ Մշակի ևս թարգմանչական կարողութեան խեղճութիւնն այսպէս ողորմելի կերպիւ չէր ձերկացնէլոյ համար, թողումք «պատճառ» բառին ֆ գինն տող ը գիրը գործածելու անհմտութիւնն, զոր վերհանձն ներողամտութեամբ իրեն կրաշխեմք։

«ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 7 Մարտի։ Թատրոնի այրվելու ժամանակ մարդկեանց հետ պժբաղդութիւններ չպատահեցաւ»։ Մշակ № 40։

Ա՛ռ քեզի հշական նոր ոճ մ՝ ալ։ Եթէ մարդկերանց հետ չպատահեցաւ, յայտ է թէ այդ դժբաղդութիւնը թատրօնի միներին հետ պատահել է։ Բայց ի՞նչ կինանակէ հայերէն՝ «մարդկերանց հետ դժբաղդութիւն պատահել» լսօքը։ Մի՞ գուցէ ասել ուզած լինի թէ՝ մարդոյ կրնուսա կամ անձի վնաս չէ պատահել այդ դժբաղդ արկածին մէջ։ Եւ միթէ այս իմաստը բացատրելու համար աւելի յարմար բառ կամ ասացուածք արդեօք կրնակասէր հայերէն լեզուի մէջ։ — Ձշմարիտ՝ հնադարեան գործակալութիւնը եթէ իմանար թէ իւր հնադիրներն այս աստիճան ողորմելի և չարաչար կերպիւ սպաննուելու վրայ են Մշակի մէջ, նոյն վայրկենէն կըզադարէր հնադիր հաղորդել Մշակի։

Անցեալներն ալ, չեմ յիշեր ո՛ր թուահամարին մէջ, ԱՐՁԱԳԱՆՔ շաբաթաթերթի ի լոյս ընծայումն և հրատարակութեան սկսումն ծանուցանելոյն առթիւ կասէր «ՓՈՐՁ ի նախկին խմբագիր — պնօրէն Պ. Աբգար Ցոլհաննիսեանցի անօրէնութեամբ և խմբագրապետութեամբ . . . »։

Փափագելի էր մեզ իմանալ որ եթէ ՓՈՐՁ ի նախկին խմբագիրն էր Պ. Աբգար Ցոլհաննիսեանցը, արդեօք այժմու կամ վերջին խմբագիրն ո՞վ էր եղած . . . Սակայն կըկարծեմք դիտնալ թէ Մշակ այդ բառով կամէր ասել «երբեմն ՓՈՐՁ ի խմբագիր — անօրէն . . . » իսկ երբեմն և նախկին բառից իմաստի տարբերութիւնը չգիտնալովը՝ ընկած է այդ անիմաստ կամ շփոթ իմաստի նախապաշարութեան ողորմելի և ծիծաղելի վիճակին մէջ։ Աստուած ազատէ զինքն։

ԲԱՆԱԳԱՏՆ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.

Ա՛ֆո՛ֆ-ըլէա չոր պոռոզը։ — Հռոմի քաղաքից 20 Յունվարի (1 Փետրվարի) Новость (նօվոսթ — նորութիւն) Իւսս օրաթերթին հաղորդումեն «Մենք ձշմարիտ որ ապրումենք այնպիսի մի ժամանակում, երբ ոսկեհոթթին ամեն բան մատաղ են անում՝ հայրենիքի բարեկեցութիւնը, համոզմունքը, պատիւը և սեպհական որպիքն անգամ։ Ուրեմն մարդիկ առումեն, թէ առաքինութիւնը և թէ մեղութիւնը կախուած են պայմաններից, որոնց մէջ դրուած է մարդը։ Պէտք է որ լաւ լինին պայմանները, այսինքն հասարակութիւնը, որ չդոյացնէ այսպիսի ձիւաղներ, որոնց այս օրերում պատեհին պատեղ Հռոմի քաղաքում։ Հոգիս սարսափում մտաբերելու ժամանակ, թէ ինչ զարհուրելի յանցանքներ գործելու ընդունակ է մարդը փողի համար։ Նիւթոյի մէջ պանդկապահ Անտոնիո Բլանկ և նորա ամուսինը ունէին միակ դուստր Մարգարիտ անուն՝ քսան ամաց։ Աղջիկը նշանաւոր գեղեցկութիւն ունէր։ Նորա շիկակարմիր մազերը, գեղեցկակազմ հասակը, կանոնաւոր դէմքի գծագրութիւնները և ածուխի պէս սև աչքերը սաստկացրին շատ երիտասարդների սիրտը դո-

ղալ։ Բայց Մարգարիտը պարկեշտ էր և ամօթխած, չէր նկատում երկըր-պագուներին, ջանք էր անում նրանցից խոյս տալ և առհասարակ չուներ ամուսնանալու ցանկութիւն։ Սակայն հասաւ և նորա ժամանակը։ Նորա երկրպագուներից մեկը շատ սիրահարուց և երկուսն էլ սկսան միմեանց բացատրել իրենց սիրտը և խնդրել ծնողաց օրհնութիւնը։ Մայրը և հայրը թէպէտ չէին ցանկանում իրենց դուստրն ամուսնացնել, բայց տխրութեան տալ իրենց համաձայնութիւնը, մերժելու պատճառ չունէին։ Ծնողաց օրհնութիւնը տուցան և սիրահարուած նշանածները այդ քախտաւոր օրը մինչև մութը նստած էին առանց իրարից աչք թեքելու։ Վիշերը ուշ՝ ամենը քաշուեցին իրենց սենեակները։ Մարգարիտը մնաւ անկողին, բայց քնել չէր կարողանում։ Նորա աստիկ բորբոքուած երևակայութիւնը շինում էր օդային ամրոցներ իր սիրելւոյ հետ ապագայ ընտանեկան կեանքի մէջ։ Յանկարծ նա լսում է իր ծնողաց ձայները, որոնք քնած էին կից սենեկում։

«Ի՞նչ պէտք է մեզ անել Մարգարտի համար, — ասում էր հայրը։ — Նա մարդ է ուզում։ պէտք է նրան տալ այն դրամագլուխը, որը կտակել է նրան նորա տատը»։ «Ա՛յո, անախորժ դրութիւն է, — պատասխանում էր մայրը»։ «Ո՛չ, ես փողերից ձեռք չեմ քաշիլ, — ազդու կերպով շշնջաց հայրը։ — Աւելի լաւ կլինի, գիտես, որ . . . սպանենք Մարգարտին և հետքը պարտակենք ջրում»։ Անբախտ աղջիկը պարզ լսում էր այդ խօսքերը, լսում էր և չէր հաւատում ինքն իրան։ Նրան այս բոլորը զարհուրելի երազ էր թվում։ Սակայն նրա քունը չտարաւ։ Նոյնը քացուել էր, արեգակի առաջին ճառագայթները արդէն թափանցել էին պատուհանից նորա սենեակը, իսկ նա րոպէ անգամ չէր մուանում այդ եղելութիւնը։ Նա թռաւ իր անկողնից, հագնուեց և տանից դուրս փախաւ։ Քանի մի ժամ փողոցներում անպատակ անց ու դարձ անելով, նա վերջապէս, վճռից գնալ մօրաքրոջ մօտ և ամենը պատմել նրան։ Այս վերջինը, ինչպէս և պէտք էր սպասել, չհաւատաց Մարգարտի խօսքերին, հաստատելով, որ այդ բոլորը երազում է եղել։ Իսկ Մարգարտի ծնողքը նոյնպէս զգացին, թէ գործը վատ է, թէ նրանք իրենց դիտաւորեալ խօսակցութեան մէջ չափազանց յափշտակուեցան, ուշ չդարձնելով այն հանգամանքի վրայ, որ նրանց դատեր սենեակը կից էր իրենց սենեկին։ Հարկաւոր էր գործը կատակի փոխել, համբոյրներով և քնքուշ սիրով հաւատացնել Մարգարտին, թէ նրանք անհամեմատ սիրում են նրան։ Բոլոր դուռ հետևանքը, ինչն ըստ ինքեան ի հարկէ Մարգարտի վերադառնալն եղաւ ծնողաց տունը։ Քանի մի օր անցնելուց յետոյ Մարգարիտը նստած էր պատուհանի մօտ և պարապած էր դործով։ Յանկարծ զարհուրելի հարուած նրա դլխին խլացրեց նրան։ Նա անզգայ վայր ընկաւ գետինը։ Հարուածը կրկնուեցաւ միանգամ ևս, նրան հարուածեցին նորա սիրելի ծնողքը ծանր կերպով։ «Մեռաւ — գոռաց հայրը, մտիկ տուր, նրա երեսի վրայ արիւնի նշան, իսկ ականջ-

Ներից արիւնը վազում»։ «Այո՛, մեռա՛։ ուրախ կերպով հաստատումեր մայրիկը.— այժմ մեզանից չեն վեր առնի փողերը»։ Եւ, արդարև, ապաքահո աղջիկը ջարդուած գլխով, բոլորին արիւնով շաղախուած՝ պառկած, տարածուած էր գետնի վրայ։ Նրա եղկար, Թանձր հիւսուքը ափուած էին և ծածկումէին նորա ուսերը և մէջքը։ Նորա վարդակարմիր շրթունքը միայն թոթովելով սիրոյ չերմ խօսքեր, այլափոխեցան, սև աչքերը մթնեցան։ Այս տեսլ սիրելի հայրը սկսեց այս խօսքերը։ «Գիտե՞ն ի՞նչ է, կտրենք Մարգարտի հիւսերը. մեկ տուր ինչպես Թանձր են և երկար և ինչ զարմանալի գոյն ունին։ Մազ չինողները կտան մեզ գոնե նրանց համար 300 ֆրանկ»։ «Այո՛, այո՛ ի հարկէ, գոռաց մայրիկը. յետոյ նա մեկ վայրկեանում վազեց մկրատ բերելու և գեղեցիկ Մարգարտի հիւսերը կտրեցան։ Սրանից յետոյ չարագործները դուրս եկան տանից, սպասելով գիշերին, որ գտեր դիակը Թագցնեն մեկ տեղում։ Այն ինչ անբախտ աղջիկը մեռած չէր,—նա գտնվումեր միայն խորին ուշաթափութեան մէջ։ Մեկ քանի միջոցից յետոյ Մարգարիտը աչքը բաց արաւ, մտաբերեց բոլորը՝ ինչ որ իւր հետ պատահել էր, սողալով դէպի դուրը, բաց արեց նրան և սկսաւ օգնութիւն կանչել։ Դրացիները, ոստիկանները վազեցին, եկան, վիրաւորին ուղարկեցին հիւանդանոց, իսկ չարագործներին բանտարկեցին, վեր առնելով պահարանից նոցա գործ արիւնաշաղախ հիւսերը։ Անբախտ աղջկան խնդրն բժշկական օգնութիւն հասցրին։ Դժուար է վճռաբար ասել, կմնայ արդեօք նա կենդանի՝ թէ ոչ։ Իյէ թէ նրան կփրկէ իւր ջահելութիւնը և իւր նշանածի ջերմ սէրը, որը մեծ է խելագարութեան»։

***

Անթեղէ կոպենհագենեան հեռանուէ.— Մի և նոյն տեղից նոյն օրաթերթին գրումեն։ «Մարինացի գիւղացի Զեզարիօ ապրելով Լէչեում ամուսնացաւ Պետրոնիլլա Միչէլլի անուն մի երիտասարդ աղրի կնոջ հետ։ Աղրը յայտնի էր իւր դաժան և կասկածոտ բնաւորութեամբ. կինը ընդհակառակը զանազանվումէր բարութեամբ և հեզութեամբ։ Ամուսնութիւնից քիչ յետոյ, Պետրոնիլլա հասնզուեցաւ իւր սխալանքի մէջ. նորա ամուսինը միշտ կասկածոտ էր և անդադրում չարչարումէր նրան։ Մեկ տարուց յետոյ նրանց որդի ծնաւ, որը շուտով մեռաւ։ Մայրը գտնւելկին ողբումէր որդոյ մահը, նա համարեա թէ միայնակ էր. ամուսինը երևումէր տանը միայն նորա համար, որ նրան ծեծի։ Պետրոնիլլա ընդունեց իւր մօտ պաստիարակելու մի չորս տարեկան որդուկ աղջիկ Մարիամ Պրօչէիիսա անունով, այնինչ Զեզարիօյի կասկածաւորութիւնը օր ըստ օրէ աճումէր։ Մխային ապրելու ոչ մի հնարաւորութիւն չկար անբախտ կնոջ համար. Պետրոնիլլա դուրս դնաց ամուսնոյ տանից և բնակեցաւ մի առանձին բնակարանի մէջ։ Մատադտհաս կնոջ կենցաղավարութիւնը կատարելապէս անպարսաւ էր. նա ոչ միայն չէր նայում ոչ մի տղամարդի վրայ, այլ և ոչ ոքի էլ չէր երևում, բայց նորա մարդը

այդ չէր նկատում՝ նա համոզված էր, որ կինը պիժուկ նրան։ Մէկ մութը գիշեր Զէզարիս մեծաւ սենեակը, ուր նստած էր նորա կինը իր փոքր որբուկի հետ։ «Դու պէտք է մեռնես։»—բարձրաձայն ասաց Զէզարիս քնից զարթնած կնոջը։ Անբախտը սկսեց աղաչել անպիտանին, որպէս զի բացատրէր իրան պատճառը, որն ստիպել է նրան այսպիսի զարհուրելի որոշում անել։ Մարիամիկը անկողնից վեր թռաւ, հեկեկալով փաթաթուեց Զէզարիսի ծնկներին, աղաչեցէր նրան, խղճալ իր մօր վրայ. բայց ոչինչ չօգնեց։ Առանց որ և իցէ բացատրութեան, ճիւաղը վեր առաւ պարանը օղձիա (петля) շինեց, ձգեց կնոջ պարանոցը և սկսաւ խեղդել։ Թոյլ ըմէը չկարողացաւ երկար միջոց մրցել մարդասպանի հետ և հոգին արձակեց։ Վերջացնելով կնոջ հետ, Զէզարիս սկսաւ ձեռք առնել որբուկին։ Ահագին լուռ խաւրին լցրից մի շալակ փայտ, վրան ածեց նաւթ, և երբ որ բոցը սկսաւ բարձրանալ, ձգեց Մարիամին կրակը շնայելով նորա աղեխորով աղաչանքին և ծածկեց կափարիչով։ Այդ ճիւաղը մարդկային ազգի հրէշը, հանգրուանութիւնը անգամ տարաւ խաւրը բռնել այնքան՝ որ մինչև անբախտ աղջկայ պիակը ածուխ դարձաւ։ Զէզարիս բանտարկուած երկար միջոց հանգստովանուեց իր յանցանքը. բայց երազի մէջ ցնորքը նրան մնանեց։ Նորա բանտի ընկերները լսումէին ամեն գիշեր ինչպես չարագործը գոռումար։ «Մեռի՛ր, մեռի՛ր, ես կամենում՝ քեզ խեղդել»։ և այդ միջոցին ձեռքով էլ նշան էր անում։ Ցետոյ շատ չանցած՝ բոլորը խոստովանուեց։ Այս օրերը երդուեալներին ներկայացաւ գատարանում այդ զարհուրելի չարագործը։ Ժողովուրդը, երդուեալները և գատարանը բոլորովին սարսափեցան, երբ ժանդարմները բերին յանցաւորին։ «Մեղաւո՛ր է արդեօք նա յիշեալ չարագործութեանց մէջ»։ այս հարցին երդուեալները ստորագական պատասխանը տուին գիջողութեան նշան անգամ ցոյց չտալով գատապարտելոյն։ Գատարանը վճռեց Զէզարիսին մահուան պատժի ենթարկել, կախ տալով։ Հրէշը բողոք տուեց, բայց լսուեցաւ, որ հասարակութիւնը կպահանջի Զէզարիսին ենթարկել մահու պատժի, թէպէտ Իտալիայում այս պատիժը կայ միայն (de jure)։»

***

Մանկական հիւանդութեանց բժիշկ պ. Էդելբերգ իրրև նախապաշտպանողական միջոց ընդդէմ կոկորդացաւի (բողազացաւի) (дифтеритъ) խորհուրդ է տալիս մի դրգալ սալիցիլովաթթու սոդան (салициловая сода) խառնել մի բաժակ մաքուր ջրի մէջ և այդ ջրով առաւօտ և իրիկուն ողողել կոկորդը բողազը։

Նորանից յետոյ հարկաւոր է ամենայն օր զննել կոկորդը, և երբ նկատուին նորանում դեղնաւուն բծեր, որքան կարելի է շուտով, դիմել բժշկին և մինչև բժշկի գալը մի կեդրակուրի դրգալ ալբումոզ, մի կեդրակուրի դրգալ գլիցերին (глицеринъ) և թէյի դրգալի քաւորդաշափ սալիցիլաթթու (салициловая кислота) խառնել իրար հետ (ի հարկէ առաջուց պէտք պատրաստի ունենալ) փոքրիկ, փափուկ վրձինը թաթխել յիշեալ խառնուրդի մէջ և կէս ժամը մի անգամ քսել այն բծերին։

Ա յս վարակիչ հիւանդութիւնից չվարակուելու համար հարկաւոր է մի շիշ (бутылка) մաքուր ջրի մէջ խառնել մի կերակուրի գդալ կէֆէլ թթուուտա (карболовая кислота) և նորանով սրսկել այն տան մէջը, ուր սիրում է այդ հիւանդութիւնը։ Ո՛ր ընտանիքի կամ որ շրջանի մէջ պատահի այս հիւանդութիւնով բռնուած, անմիջապես պէտք նորան զատել առողջներից սոցա վարակուելից պահպանելու համար։

Վերոյիշեալ բոլոր դեղօրայքը 30—80 կոպէկ արժողութիւնից աւելի չեն։

Ս. ՍԻՆՕԴԻ ՕՐԱԴԻՐՆԵՐԻՑ

Ի 16 Հոկտեմբերի 1881 ամի. որովհետեւ Վեհ. Հայրապետ Աղգիս Գէորգ Դ. ի Կոստանդի իւրում տուելոյ Ս. Սինօդի ի հրամանագրութիւն ի 5 Յունվարի 1871 ամի հաստատել ի վերայ Եկեղեցական կանոնաց (Բարգի կնասրագրոյն յօդ. ՁԾԴ. եր. 10.) օրինադրէ «Որ որ այրեսցի տիրի յիրի տասարդութեան հասակի իւրոյ, Թողլատրեմք այնպիսեացդ անարգել մտանել յերրորդ ամուսնութիւն. իսկ վասն չորրորդի ոչ ունիմք կանոնս ի նախնեացդ, եւ լաւ է նոցա չմտանել ի չորրորդ ամուսնութիւն, այլ եթէ ոչ ունիցին ժոյժ՝ ներելով ասեմ եւ ոչ հրամայեմ տալով՝ Թոյլ տացի այնպիսեացդ առ ի ոչ անկանելոյ ի մեղս մարդկային տկարութեամբ, եթէ ոչ ունիցին արդեսս ինչ ախտի կամ այլ պատճառութիւն ըստ բժշկական օրինաց, որ ապահանել դիտէ զծնունդս կամ վտանգաւորիկ տանել զամուսնին», այլ որովհետեւ Վաղարշապատոյ Մելքոն Մրբազանեանց մահեալ է ի չորրորդ ամուսնութիւն ի վաճանցեալ հասակի իւրում ընդ երեսունչորսնակ տարեսանեայ Մարիամու Բաղդասարեան, եւ այն առանց նախընթաց պատշաճաւոր լուծման եւ Թոյլատրութեան Հոգեւոր Բարձրագոյն իշխանութեան, որ հակառակ է եկեղեցական կանոնաց եւ մտաց կոնդակի Վեհափառ Հայրապետի, ուստի պարտի վերոյիշեալ Մելքոնի Միրզաջանեանց ընդ Մարիամու Բաղդասարեան համարիլ անվաւէր։

Ի 13-ն Յունվարի 1882 ամի. որովհետեւ կարապետ քահանայն Մխիթարեանց Կարմիր — աղբիւր դեղջ առանց հրամանի կատարեալ է զպսակներվին եւ զանթոյլատրելի պսակ Մկրտչի Ադամեան ընդ Ղումաշայ Աբրահամեանց ի մերձաւոր խնամութեան աստիճանի նոցին, վասնորոյ դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ զամս երիս եւ ապաշխարեցուցանել ի մի ի վանօրէից վիճակին, իսկ զմարդիս քահանայն Աբրահամեանց Նորաշէն գեղջ դեղբայրն հարկնացուի ենթարկել քահանօրեայ ապաշխարանաց սահմանեալ եւ զորօք եկեղեցւոյ տեղւոյ առանց փիլօնի, եւ զապօրէն կատարեալ զպսակն յիշեալ Մկրտչի Ադամեանց ընդ Ղումաշայ Աբրահամեանց համարել անվաւէր։

Ի 29 Յունվարի 1882 ամի. զՊօղոս քահանայն Փոռ. գեղջ Հնոյն Նախիջեւանի վասն ձգելի ազգի անկարգութեանց իւրոց եւ վասն կատարելոյ առանց հրամանի ըզչհան սրսկել, դադարեցուցանել ի քահանայագործութենէ անսահման ժամանակաւ եւ առաքել ի վանս ինչ ի խրատ եւ յուղղութիւն նորա եւ ի ղուշութիւն այլոց քահանայից։

— Առ՛ք, ասում ա, ոսկի՛ք. ձեզ ըս օր մի թաղայ ընկեր էլ եմ բերե։

Աղքատը էլ եդ բըղդները դնում ա տախտի տակը, ինքն էլ պառկում քնում։ Հարուստը էլ վախտ չի կորցնում — տախտի տակիցը ուսուլով չորս բըղտըն էլ վեր ա անում, դուռը բաց անում ու ծլկում։

Առաւօտը որ վեհանում ա էֆ չէ՝ աղքատը էլի դուս ա գալի աղքատութիւն անելու։ Սաղ օրը ինչ որ հաւաքում ա՝ հաւաքում, իրիկունը էլ եդ տուն ա գալի։ Տախտի տակիցը ուզում ա փողի բըղները հանի, որ հնուաքած փողերը իրանց տեղերն ածի՝ մնում ա սառած, որ տեղում ա ոնչ փող կայ, ոնչ զագ։ Շատ ա գլխին տալի, լաց ըլնում՝ համայ ձեռը զաղ չի ընկնում։

Մի օր էլ էս աղքատը բաղարի դրանը ողորմութիւն էր կիտում։ Էն սրա փող տանող հարուստ մարդը տեհաւ էֆ չէ՝ ճանաչեց. կանչեց տարաւ աշղամժ խանէն, իրա փողովը կերակուր ածիլ տուեց նրա հմար, տուեց ուտի։

Աղքատը ինչքամ զօրում էր՝ կերակուրը բողազովը կուլ չէր էֆում։ Աղքատը ինքն իրան միտք արեց. «բալէ՛, էս իմ փողն ա, որ կուլ չի էֆում. կայ, չկայ՝ էս մարդն ա փողերս գողացե»։ Էֆում ա դուզ էն հարստի հախէն զայիմ բռնում։

— Ա՛ղաչէր, ասում ա. իմ փողերը դու՛ս ես գողացե՝ ասե՛։

— Ջա՛նըմ, գե՛օղըմ, ասում ա հարուստը. ես քեզ լաւութիւն արի, որ դու նրա տեղակ ինձ վրա դեռ շատ էլ գցե՞ս։

Աղքատը կռիւ, ղալմաղալ.—չէ՛, իմ փողերը դու՛ս ես տարե՛, որ դու ես տարե՛։ Հարստին քաշ տալօն՝ տանում ա թագաւորի կուշտը։ Թագաւորը հարցնում ա.

— Բա՛քի. ի՞նչ ես ուզում։

— Թագաւորն ապրած կենայ. էս մարդը փողերս գողացել ա, չի տալի։

— Ո՞ւրդիան գիտաս, որ սա ա գողացե. հարցնում ա թագաւորը։

— Ջունքի ես իմ փողովը որ զաղ ի առնում՝ ըսկի բողազովս կուլ չէր էֆում։ Էվի ես մարդը բաղարումը ինձ կերակրի զօնաղ արեց՝ չկարացի ուտի — կուլ չգնաց. երեւում ա որ գողացած փողերս ես մարդի կշտին ա։

— Թէ որ քու վարդը քեզ կուլ չի էթում, ասում ա թագաւորը. բան էլ քու ընչիցն ա պէտք. հազիր Թուղ նա բանայինի, ում կուլ ա էթում. Գնա, բաբի, գնա բանիդ. քու վարդը ես մարդին իրա մօր ծծի կաթի նման հալալ ա, ասում ա թագաւորը ու ջուղաբ անում։

ՈՆՉԼԵՓԵԱՐ ՀԷՔ։

Կըլնի չըլնի մի մարդ մի կնիկ։ Սրանք ունենում են մի տղայ՝ մի աղջիկ։ — Համայ մէրը խորթ ա ըլնում, հէրը հալալ։ Խորթ մէրը ես էրկու էրեխէքանցը ըսկի օր չէր տալի։ Մի հեա էլ մարդի եախէն ա կպնում։

— Ա՛յ մարդ, ասում ա։ Թէ ուզում ես որ ես քու կնիկն ըլնեմ ու քեզ աչքիս լոկ պէս սիրեմ՝ էս քու էրեխէքանցդ սնոց ըլնի եա պոի մորթես, եա Թէ չէ տանես մի դհով կորցնես, որ աչքս չտենայ դրանց։ Թէ չէ լմաց կայ, ես գլուխ վեր կունեմ կէթամ։

Խեղճ հէրը չէր իմանում ինչ անի, որ ջուրն ընկնի որ կնիկայ ձեռիցը պրծնի։ — Ձար չկար. եղի վերջը էլ պոի նրա ասածն անէր։

Մի օր, տղին կանչում ա, ասում ա — արի գլուխդ վեր անիմ ու բերդան արծրալ տալի շլինքը Թռցնում։ Մէրը տղի վիսը կփսում ա ու ինքը մէն մէնակ ուտում՝ անուշ անում՝ մնացածն էլ քլօր հմար պահում։ Գիրը իրկունը տուն ա գալի, մօրից հայ ուզում։

— Ա՛ղի, սաղաճ եմ. ըսկի ինչ կայ ուտելու։ Մէրը ԹօնԹորալէն ասում ա։

— Աահէն դուռումի ուտես դու. գնա հրէն սալի մէջին մի քանի Թիքայ վիս կայ՝ վէ կալ, կէ։

Խեղճ քիրը գնաց, ինչ տենայ — լրա աղջօր ձեռները նստեց ընդէ մի կուշտ լայ էլաւ. համայ լայ ընելօն ինչ պաի անէր, բանը բանից անց էր կացէ։ Աղջօր ձեռները վէ կալաւ ու գըռնէ դուս։ Գժուածի նման քուչայ քուչայ ընկաճ՝ ման էր գալի։ Վերջը սրան մի մօլլայ ռաստ էկաւ, հարցրեց — խի՛ ես լայ ընում։ Քիրը նաղլ արեց, ինչ որ գլխովը անց էր կացէ։

— Բան չկայ, որդի, ասեց մօլլէն. մի լայ ընի. էդ ձեռները տար դի մի պատի ճղակ՝ վրէն ջուր ածա — աղջէրդ էլ էգ կըսաղանայ։

Գիրը ըսենց էլ անում ա — վեր ա ունում տանում մի պատի ճղակում ֆորում, վրեն ջուր ածում թե չէ՝ էն սհաթը աղպէրը ատանում ա, ծիա ըլնում՝ թռնում։ Էս ծիան ա՝ թռնում ա էթում, դուքանէ դուքան ման գալի՝ հետը ատում՝

«Մլիակ եմ, ծլվլվլիկ եմ,
«Հօր մորթած եմ,
«Մօր կերած եմ,
«Անուշ քվօր լացած եմ։»

Ո՛րը մի թօվի ասեղ ա տալի, ո՛րը մի թօվի քորոց, ո՛րը մի բազդադի աղլուխ։ — մնըլաս ո՛վ լինչ ուզում ա։ Ըսենց հաւաքելօն՝ թռնում ա էթում իրանց երգիկի գլխին նստում՝ ատում ա՝

— Հէրիկ, մէ՛րիկ՝ մի վեր մտիկ ածնէք։

Չէնց որ հէրն ու մէրը դպա երթիկին են մտիկ անում թե չէ՝ ոտքեն աւէն մէկի աչքը մի մի թօվի ասեղ ա գցում — աչքները քօռացնում։ Սննայ քվօրն ա ձէն տալի՝

— Քո՛ւրիկ, քո՛ւրիկ՝ մի վեր մտիկ անէ՛ս։

Գիրը գլուխը բանձրացնում ա թե չէ՝ մի բազդադի աղլուխ էլ նրա գլխին ա գցում։

Իբէ+ Ընդ+նէ+

Կըլնի չլնի մի թագաւոր։ Էս թագաւորի երկրումը մի գիժ կնիկ կար՝ ունէր իրեք տղայ։ — Նրանցից մինը ոըշպար էր, մինը՝ կատեսան, մէկելը՝ ջուհլակ։ Մի տարի էս թագաւորի երկիրը սով ընկաւ։ սով, էն թամամ սով, որ իմ միս կտրողին ոատտ չ'գայ։ — մի կտոր հացի համար հազար գլուխ ին ջարդում՝ ըն էլ ձեռ չէր ընկնում։ Մի օր, չեմ գիտայ ոնց եղաւ, թագաւորի ուղտը կորաւ։ Էս գիժ կնկայ տղէքը տեհան թե չէ՝ բըռնեցին տարան տուն։ Գիտային որ իրանց մէրը գիժ ա, կէթայ թագաւորին խաբար կըտայ՝ բերին նրան հարսի չորեր հագցըրին, լաչակ գձեցին երեսին, տարան տան պուճախումը կանոնացրին։

— Նայնի, ասեցին։ քեզ պտի թագաւան պատկենք։ Էս ուղտն էլ՝ քու հարսանքի ուղտն ա, մըրթում ենք, որ հարսանքաւորի համար կերակուր էլնենք։

Իրեք աղլուխնքը ուղտը մըրթեցին, քերթեցին։ վիսը դաւ բամայ արին, լցրին աքաշնիերը՝ տարան թաքուն տեղ պահեցին, որ

չգտնեն՝ քալի մեն լեն գալի. թէ չէ նրանք տնով, տեղով Սիբիրական լեն։ Եննայ ամէն մարդ գնաց իրա բանին։

Թագաւորը իրա նօքարներին ղրկեց, որ էթան կորած ուղտին մեն գան։ Նօքարները շատ գէս ընկան, գէն ընկան՝ չգտան։ Վերջը էկան որ էս գիժ կնկայ տղէքանցը հարցնեն։ Աղաք ըշտպար աղպօր կուշտը գնացին, որ հանդումը վար ու ցանք էր անում։ Թագաւորի նօքարները հարցրին.

— Ա՛ղպէր, ըստերանք ուղտ հօ չեն տեհէ։

— Չէ՛ք տենում, որ վար եմ անում։ Սա իրան ընենց էր շանց տալի, տաքի թէ գիժա։

— Մենք քեզ հարցնում ենք՝ ուղտ չես տեհէ, գու ասում ես՝ վար եմ անում։ Էդ հօ մենք էլ ենք տենում. թէ բան գիտաս՝ ասա։

— Չէ, ընենց օրա ըլնում, որ մի օրավար ենք վարում. ընենց օր ա ըլնում՝ երկու օրավար։

— Ա՛ղա ենք ասում, ուղտ չտրա ոննանի, երկու տնկաջանի, շլինքը ծուռը։

— Էս հլա վարում ենք. վարից ետը սրտի ցանենք, բեջարենք, վախտին ջրենք, որ մասիլը չչորանայ։

Թագաւորի նօքարները իրար մէջ ասեցին. «ա՛ղպէր, սա գիժա, սրանից բան չենք հասկանայ. էթանք էն մեկել աղպօր կուշտը, բալի մեզ մի դրուստ ջուղաբ տայ։» Գնացին կատեպան տղպօր կուշտը, տեհան պօպօք ա թաւի տալի. հարցրին։

— Ա՛ղպէր. թագաւորի ուղտը կորել ա, բալքի տեղնած ըլնես։

— Ծօ՛ղ էք, ինչ ա. չէ՛ք տենում, որ պօպօք եմ թաւի տալի։ Սա էլ իրան ընենց շանց տուեց, տաքի թէ գիժա։

— Թագաւորի ուղտն ենք ասում, թագաւորի ուղտը. տեհել ես՝ ասա տեհել եմ, թէ չէ՝ պրծանք գնաց։

— Ընենց տարի ա ըլնում, որ պօպօքի հարիրը մի մանեթով ենք ծախում։ ընենց տարի էլ ա ըլնում, որ հարիրը երկու մանեթով ա էթում։ — տալին գիտաս։

— Ա՛ղպէր ենք ասում, ուղտ. քաղ ես, ինչ ա։

— Էս հլա դեռ պուճուր ծառն ա. մենծ ծառը յիքու գլխին ա. էն եննայ պտի թաւի տանք։

Նօքարները իրանց իրանց միտք արին, թէ սա նրանից գիժ ա. էթան սրանց տունը, մեկել աղպօրը հարցնեն. բալքի

նա թագաւորի ուղտիցը խաբարութիւն ունենայ։ Գնացին ջուխլակ աղպօր կուշտը՝ հարցրին.

— Թագաւորի ուղտը կորել ա, ախպեր. հօ չես տեսել. քեզ մուշտուլուղ կ'տանք։

— Ախքերդ լաւ բաց արէք, լաւ. չէք տեսնում ինչ ա, որ կըտաւ եմ գործում։ Սա էլ մեկել աղպօրտանց պես՝ իրան գիժ շանց տուեց։

— Քեզ ուղտ ենք հարցնում, դու ասում ես՝ ֆլան չի, քէհմեն ա։

— Չէ, ընենց օր ա ըլնում՝ մի թօփ եմ գործում. ընենց օր ա ըլնում՝ կէս թօփ էլ ա չեմ կարում գործի. — վախտը գիւտայ։

— Գիժ հօ չես, այ աղպէր. մենք քեզ թագաւորի ուղտն ենք հարցնում՝ դու կտաւիդ վրա ես խօսում։

— Էժան վախտը կտաւի թօփը վեց աբասի ա, թանգ վախտը՝ ութ աբասի, եան էրկու մանեթի։

Թագաւորի նօքարները ասեցին. — ախպէր, սա էն էրկու աղպօրից էլ գիժ ա էրեւում. էթանք սրանց մօրը հարցնենք, քալքի նա մեզ դրուստ ջուղաը տայ։ Գնացին սրանց գիժ մօրը հարցրին, թէ թագաւորի ուղտը հօ չի՞ տեսել։

— Ո՛նց չէ, ասեց. տեսել եմ. իմ տղէքը բերին մորթեցին, գաւուրմայ արին՝ հրէնիկ աքաչներում պահել են։

— էդ ե՞ր։

— Եր որ ես թագայ հարս ի, ինձ նոր պտի պտակէին։

Թագաւորի նօքարները տեսան, որ էս կնիկը նրանցից գիժ ա՝ թողին գնացին թագաւորին իմաց տուին, թէ մեռան մանգաղօն՝ ուղտը չկարացին գտնի։

Մօրթալէ հեթաղը.

Ըլնում ա չըլնում աւալ ժամանակին մի մարդ մի կնիկ։ սրանք ըսկի պատուղ (որդի) չեն ունենում։ Էս խեղճերը մեռան սրբերի դուռը էթալօն, մատաղ անելօն, ողորմութիւն տալօն՝ չէ, չէլաւ. Ասօօծ սրանց պատուղ չատուեց։

Անց կացաւ ըսենց հինգ տարի, տասը տարի, քսան տարի։ վերջը մարդը միտք արեց՝ իրանց դրան աղաքին մի խոր փոր փորել տայ, երեսըհանց ընենց փողով ծածկի, որ մալում չանի։ Ասեց — ով կգայ մի գաղիլ էս փորի մէջը կընկնի՝ հէնց նրա եախէն

զայիմ բռնեմ ասեմ. գոնե կարաս իմ գարդին դարման անի, էլ մարդ չէ։ Բերում ա ըտենց էլ անում ա — իրանց քուչի դրան կշտին մի քառասուն գազանոց ֆոր ա վորիլ ա տալի, երեսըհանց էլ ֆաղով ծածկում, կօկլիացնում, դղում՝ որ վրովը անցկացողը ըսկի չէր ֆահմի, թե նրա տակը եքայ ֆոր ա քանդած։

Առաւօտը, գեռ լիս ու մութը չքաժանուած, էս մարդը վեր ա կենում աենում՝ ֆորի միջլոցը մի նուսղի ձէն ա գալի։ Լսում ա ֆորի բերանը բաց անում, տենում քօռաղադընայ մի գաւրիշ ա ընկե մէջը։

— Ա՛ասսւ սիրուն, աոում ա գաւրիշը. մի լինճ ըտոխան աղատա՛ լինչ ուզես՝ կտամ. — թէ կնիկդ երեխայ չի բերում՝ ընենց կանեմ, որ երեխայ բերի. թէ տանը հիւանդ ունես՝ կլաւացնեմ. մախլաս, լինչ հունար ասես՝ ձեռիցս կգայ. . . .

— Չաթի ես հենց քեզ ի ման գալի, գաւրիշ ազպէր, եդ լաւ էլաւ։ Էսքամ տարի մեռայ դեղ, դարման անելօն, սրբերի դուռը մաշելօն՝ ճար, իլլաջ չէլաւ — կնիկս պտուղ չբերեց. որ կարենաս ըտենց մի բան անի՝ գեռ հլա քեզ բօլ փող էլ կըպաշխեմ։ Գաւրիշն հանում ա ֆորիկը, տանում իրանց տունը։

Գաւրիշը մի խնձոր ա ուզում, կէս անում՝ տալի էն մարդին։

— Ա՛ռ, ասում ա. խնձորի մի տապակը գո՛ւ կուտես, մի տապակը կտաս կնկանդ. վեց ամսէն վրա՝ կնիկդ մի տղայ կբերի։

Էն մարդը գաւրիշին բօլ փող բաշխեց՝ ճամիու դրեց։ Ուրախ ուրախ գեռ խնձորի մի տապակը ինքը կերաւ, կէսն էլ պահեց որ կնկանը տայ. չունքի կնիկը տանը չէր՝ հարեւանի տունն էր գնացէ։ Շատ կացաւ, կացաւ՝ տեհաւ եդանում ա. ասեց — աբի էս մի տապակն էլ ես ուտեմ. ինչ պտի ըլնի. մին չի — ես կերած՝ կնիկս կերածճ։ Վեր ա ունում՝ էն մի տապակն էլ ա ուտում։

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, մախլասի վեց ամիս՝ էս մարդը էրկըֆոգաանում ա, ազատվում. բերում ա ըն էլ լինչ — մի մօթալի տիկ։ Էնց ազատուելիս էլ՝ ինքը մեռնում ա։

Խեղճ կնիկը մնում ա միտք անելօն, թէ էս մօթալի տիկի մէջը լինչ զօրութիւն պտի ըլնի, որ ոնչ բերան ունի, ոնչ ոտ, ոնչ ձեռ՝ մախլաս ոնչ մի մարդի նշան չկայ վրէն։ Վեր ա ունում էդ տիկը տանում իրանց շիրախանում վէ գցում։ ասում ա՝ տե-

նամ, քանի որա մէջը մի բան կայ. թող մնայ մի քանի շաբաթ էլ, տեղանք լինչ կըլնի։

Մի շաբաթ անց կացաւ, երկու շաբաթ՝ տեհաւ շիրախանում մինը իրան ձէն ա տալի.

— Ա՛ղի, ախպեր, արի ըսահ՝ բան եմ ասում։

Մնում ա զարմացած, վեր ա կենում էթում տենում՝ էն մօթալի սիկն ա ձէն տուղը։ Յիսուս Քրիստոս ա անում՝ մօտին կանգնում։

— Ա՛ղի, ասում ա Մօթալը. էգուց կէթաս մեր թագաւորի կուշաը, նրա աղջիկը կուզես լինէ. կասես — թագաւորն ասրաճ կենայ, իմ Մօթալ տղէն աղջկանդ ուզում ա։

— Ո՛նչ ես ասում, այ որդի. գիժ ես, խեղ ես, լինչ ա. քեզ ոլ աղջիկ կասայ, ուզում ես իմ գլուխն էլ կորվել տաս, հենց էն ըլնի։

— Ա՛յ մեր, ես քեզ ասում եմ գնա՝ գնա. էդ քու բանը չի— կասան՝ չեն տայ։

Խեղճ կնիկը չի իմանում լինչ անի. ո՞նց էթայ թագաւորի աղջիկը ուղի Մօթալին, Չէմայ որ տենում ա Մօթալը շատ ա զօրում՝ վեր ա կենում էթում թագաւորի խնամաքաթի վրա նստում։ Թագաւորը դուս ա գալի՝ հարցնում.

— Ա՛յ մերայ, խէ՞ս ես էկէ. լինչ խնդիրք ունես ասելու։

— Թագաւորն ասրաճ կենայ, լինչ ասեմ. մի տղայ ունեմ, լինէ զօրոլ, գիւղով ղրկել ա որ քու աղջիկը ուզեմ նրան, ես հաղար ասեղն թէ թագաւորը քեզ աղջիկ չի տայ՝ չլսեց. հմի էկել եմ տունդերդ եմ ընկէ, դու քու Աստօծ. լինչ ուզում ես, արա։

— Կ՛տամ, խէ՞չեմ տայ աղջիկս. համայ իրեք բան կ՛ուզեմ, թէ ասէգ կարաց բերի՝ հօ աղջիկս իրանն ա ու իրանը. թէ չէ՝ երկսէգ գլուխն էլ թռցնիլ կ՛տամ։ Էս հետ կ՛էթաս տղիդ կասես, թէ թագաւորն ուզում ա օխտը ընենց դեւ, որ համ քօռ ընենն, համ քառ, համ լալ։ Իմ ուզած իրեք բանից՝ մինն էս ա։

Խեղճ մէրը վեր ա կենում, գառը, տխուր գալի տուն. հենց էն ճամբին տղին անըճում — Ժուռ ու մուռ ընես, ասում ա, այ Մօթալ. որ լինէ ըսենց կրակի մէջ գցեցիր. հմի որդիան պտի ճարենք օխտը էն Թավուր դեւ, որ համ քառ ընենն, համ քօռ, համ լալ։— Գալիս ա Մօթալին ասում իմ թագաւորի ուզածը. Մօթալն ասում ա.

— կ'էթաս գերեզմանատունը. ֆլան մարմարե քարին կրնք հետ մատդ կ'քսես՝ կ'ասես — Մօթալը քեզանից օխտը դեւ ա ուզում, որ համ քառ ըլնեն, համ քօռ, համ լալ. էլ ես կ'գաս։

Մէրը վեր ա կենում էթում գերեզմանատունը, ման գալի, էն մարմար քարը գտնում. մատը կրնք հետ քսում քարին՝ ասում — Մօթալը քեզանից օխտը էն թաւլուր դեւ ա ուզում, որ համ քառ, համ լալ ըլնեն.—էլ եղ գալի տուն։ Մօթալը հարցնում ա.

— Ա՛ղէ, գնացիր. գտա՞ր մարմար քարը. ասեցիր։

— Հա՛, այ որդի. գտայ, ասեցի. համայ ըակի բան չ'ասեց։

— Լա՛ գնա. հմի դեւերը գնացած կըլնեն թագաւորի կուշտը. ասա տենանք էլ ինչ ա ուզում։

Մէրը վեր ա կենում էթում թագաւորի խնամախաչի վրա նստում։ Թագաւորը էն սհաթը դուս ա գալի.

— Հը՛, մէրայ, ես մինը տղեդ բերիլ տուեց. մնաց երկուսը։—Ես հետ էլ կէթաս տղիդ կասես, որ աղջկանս համար մի ձեռք էն թաւլուր շոր կարիլ տայ, որ ոնչ մկրատ դիպած ըլնի, ոնչ ասեղ, ոնչ թել. ինքն էլ ակն ու մարգարտներով, բրդի. անդներով զարդարած. որ աղջիկս հագնի թէ չէ՝ դուզ վրէն գայ — ոնչ աւել ըլնի, ոնչ պակաս։

Մէրը վեր ա կենում գալի տղին ասում թագաւորի ուզածը։ Մօթալը ասում ա.

— Գնա՛ էլ էն մարմար քարին կրնք դան մատդ քսա՝ իմ անուն տուր. ասա — Մօթալը քեզանից էն թաւլուր մի ձեռք աղջկայ շոր ա ուզում, որ վրէն ոնչ մկրատ բանած ըլնի, ոնչ ասեղ ոնչ թել։

Մէրը վեր ա կենում էթում, էն մարմար քարին կրնք հետ մատը քսում ա՝ ասում, — Մօթալը քեզանից մի ձեռք էն թաւլուր աղջկայ շոր ա ուզում, որ ոնչ մկրատ դիպած ըլնի, ոնչ թել, ոնչ ասեղ.—էլ եղ գալի տուն։ Մօթալը հարցնում ա.

(Շարունակելի) Տ. Նահապետեանց։